ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1950 *Общественные науки*

Հ. Կարապետյան

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1930—1934 Թ. Թ.)

ՍՍՌՄ պատմության մեջ 1929 թվին կատարված մեծ բեկումը 1930—1934 թ. թ. նշանավորվեց ավելի ու ավելի ծավալվող վերելքով՝ ինչպես ժողովրդական տնտեսության բնագավառում, այնպես էլ աշխատավորների նյութական-կենցաղային դրության է՛լ ավելի լավացման ու կուլտուրական շինարարության լայն ծաղկման ասպարեզում։

«Այդ ժամանակաշրջանում ՍՍՌՄ-ն արմատականորեն փոխակերպվեց,— ասում է ընկեր Ստալինը,— իր վրայից դեն նետելով հետամնացության ու միջնադարականության կերպարանքը։ Ագրարային երկրից նա դարձավ ինդուստրիալ երկիր։ Մանր, միանձնյա գյուղատնտեսական երկրից նա դարձավ մեքենայացված խոշոր գյուղատնտեսության երկիր։ Խավար, անգրագետ ու անկուլտուրական երկրից նա դարձավ— ավելի ճիշտ դառնում է գրագետ ու կուլտուրական երկիր, որը ծածկված է բարձրագույն, միջնակարգ ու տարրական դպրոցների հսկայական ցանցով, որոնք գործում են ՍՍՌՄ-ի ազգությունների լեզուներով»։[1]

Այդ նույն ժամանակաշրջանը կապիտալիստական երկրների համար շարունակվող համաշխարհային տնտեսական կրիզիսի շրջան էր, որն ընդգրկել էր ոչ միայն արդյունաբերությունը, այլև տնտեսության մյուս բոլոր ճյուղերը։

ՍՍՌՄ արդյունաբերության արտադրանքի ծավալը՝ 1929 թվի մակարդակի համեմատությամբ 1933 թվին աճեց ավելի քան երկու անգամ և 1934 թվին կազմեց 239 տոկոս, իսկ ԱՄՆ-ի արդյունաբերության ծավալը 1933 թվի վերջերին ընկել էր 1929 թվի մակարդակի մինչև 67 տոկոսը, Անգլիայի արդյունաբերությունը՝ մինչև 86 տոկոսը, Գերմանիայի արդյունաբերությունը՝ մինչև 66 տոկոսը, Ֆրանսիայի արդյունաբերությունը՝ մինչև 77 տոկոսը։[2]

Կապիտալիստական երկրների արդյունաբերության անկումը և Սովետական Միության արդյունաբերության խոշոր վերելքը 1929—1934 թ. թ. մի անգամ ևս ցույց տվեց «սոցիալիստական սիստեմի առավելությունը կապիտալիստական սիստեմի հանդեպ։ Այն ցույց էր տալիս, որ սոցիալիզմի երկիրը աշխարհում միակ երկիրն է, որ ազատ է տնտեսական կրիզիսներից»։[3]

Պարտիայի 16-րդ համագումարում տված իր հաշվետու զեկուցման մեջ ընկեր Ստալինը ասում էր, որ համաշխարհային տնտեսական կրիզիսը մի շարք երկրներում փոխվելու է քաղաքական կրիզիսի, իսկ այս՝ նախ և առաջ «նշանակում է, որ բուրժուազիան դրությունից ելք է որոնելու հետագա ֆա-

---

1 Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 536, 11-րդ հրատարակություն, Երևան, 1940 թ.։

2 Համկ(բ) Պ Պատմություն, համառոտ դասընթաց, էջ 411։

3 Նույն տեղում։

շիզացման մեջ՝ ներքին քաղաքականության բնագավառում, օգտագործելով դրա համար բոլոր ռեակցիոն ուժերը, այդ թվում և սոցիալ-դեմոկրատիային։

Երկրորդ՝ այս նշանակում է, որ բուրժուազիան ելք է որոնելու իմպերիալիստական նոր պատերազմի մեջ՝ արտաքին քաղաքականության բնագավառում։

Վերջապես, այս նշանակում է, որ պրոլետարիատը, պայքարելով կապիտալիստական շահագործման ու պատերազմի վտանգի դեմ՝ ելք է որոնելու ռևոլուցիայի մեջ»։[1]

Կապիտալիստական երկրների տիրապետող դասակարգերը կրիզիսից դուրս գալու ելքը համարում էին համաշխարհային նոր պատերազմը, աշխարհի նոր վերաբաժանումը։

Կապիտալիստական սիստեմի այս վոթորկող տնտեսական կրիզիսի «հետևանքը եղավ կապիտալիստական երկրների քաղաքական գրության մինչև այժմ չտեսնված սրումն ինչպես այդ երկրների ներսում, այնպես էլ նրանց միջև»։[2]

Սրվում են հակասությունները նաև կապիտալիզմի ու կառուցվող սոցիալիզմի երկրի միջև։

Իմպերիալիստները ձգտում էին մեղմացնել իրենց ներքին հակասությունները և դուրս գալ կրիզիսից սոցիալիզմի երկրի հաշվին։ Ինչպես նշում է ընկեր Ստալինը, «ամեն անգամ, երբ սկսում են սրվել կապիտալիստական հակասությունները, բուրժուազիան իր հայացքը դարձնում է ՍՍՌՄ-ի կողմը արդյոք չի՞ կարելի կապիտալիզմի այս կամ այն հակասությունը, կամ բոլոր հակասությունները միասին վերցրած, լուծել ի հաշիվ ՍՍՌՄ-ի, Սովետների այս երկրի, ռևոլուցիայի միջնաբերդի, որն իր գոյությամբ միայն ռևոլուցիոնացնում է բանվոր դասակարգին ու գաղութները, որը խանգարում է նոր պատերազմ գլուխ բերելուն, խանգարում է աշխարհը նոր ձևով վերաբաժանելուն, խանգարում է տեր ու տնօրինություն անելու իր ընդարձակ ներքին շուկայում, որ այնքան անհրաժեշտ է կապիտալիստներին, մանավանդ այժմ՝ տնտեսական կրիզիսի կապակցությամբ»։[3]

Ճապոնիան և Գերմանիան իրենց նվաճողական քաղաքականությամբ պատերազմի անմիջական սպառնալիք էին ստեղծում։ 1931 թվականին, առանց պատերազմ հայտարարելու ճապոնական իմպերիալիստները ներխուժեցին Չինաստանի տերիտորիան, զավթեցին Մանջուրիան, այն դարձրին պլացդարմ Հյուսիսային Չինաստանը նվաճելու և Սովետական Միության վրա հարձակվելու համար։ Ճապոնական իմպերիալիստների ռազմատենչ նվաճողական քաղաքականության շնորհիվ Հեռավոր Արևելքում առաջացավ պատերազմի առաջին օջախը։ 1933 թվի սկզբներին Գերմանիայում իշխանության գլուխ են անցնում ֆաշիստները, որոնք իրենց ներքին քաղաքականության բնագավառում գազանաբար սկսում են ճնշել բանվոր դասակարգին, ոչնչացնում նրա ռևոլուցիոն կազմակերպությունները և անասելի տեռոր ու սարսափ սփռում ամբողջ երկրում, իսկ իրենց արտաքին քաղաքականության բնագավառում պատրաստվում են պատերազմի՝ նոր տերիտորիաներ նվաճելու հա-

---

1 Ի. Ստալին, Երկեր, հատոր 12, էջ 286։

2 Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 542։

3 Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 286—287։

մար։ Այդպիսով, գերմանական ֆաշիստների շնորհիվ Արևմուտքում, Եվրոպայի կենտրոնում ստեղծվում է պատերազմի երկրորդ օջախը։

ԱՄՆ-ի և անգլո-ֆրանսիական իմպերիալիստների օգնությամբ ու նրանց միջոցով նախապայմաններ ստեղծվեցին հիտլերյան ագրեսիայի զարգացման համար։

Հիտլերի իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո, 1933 թվին անգլիական և ֆրանսիական կառավարությունների ջանքերով Հռոմում չորս պետությունների՝ Մեծ-Բրիտանիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև ստորագրվեց «Համաձայնության և համագործակցության պակտ», որը անգլո-ֆրանսիական ղեկավարող շրջանների համաձայնությունն էր գերմանա-իտալական ֆաշիստների ագրեսիան սանձազերծելու գործում։

ԱՄՆ-ի ղեկավարող շրջանների անմիջական օգնությամբ և փոխառություններով արագորեն զարգանում է գերմանական ծանր արդյունաբերությունը, ռազմական ինդուստրիան։

Անգլիայի և Ֆրանսիայի ղեկավարող շրջանները հրաժարվում են ընդունել սովետական կառավարության առաջարկները՝ կոլեկտիվ անվտանգություն ստեղծելու մասին, ջլատում են խաղաղությամբ շահագրգռված երկրների միասնությունը և ճանապարհ հարթում գերմանական ագրեսիայի համար։

Մերկացնելով ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի շմիջամտելու այդ քաղաքականությունը, ընկեր Ստալինը ասում էր, որ այդ իրականում նշանակում է ագրեսիայի սանձազերծում և նրա վերածումը համաշխարհային պատերազմի»։[1]

Միայն Սովետական Միությունն էր, որ բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ, Ի. Վ. Ստալինի առաջնորդությամբ գլխավորում ու ոգեշնչում էր խաղաղության համար մղվող պայքարը, հետևողականորեն մերկացնելով ագրեսորների և նրանց հովանավորողների քաղաքականությունը։

Սովետական Միության դեմ կազմակերպվող ինտերվենցիան հաջողացնելու նպատակով, անգլո-ամերիկյան-ֆրանսիական իմպերիալիստները ձգտում էին միավորել սև ռեակցիայի բոլոր ուժերը։ Բուրժուական մամուլի պրովոկացիոն պրոպագանդան սովետական երկրի դեմ նոր թափ է ստանում։ Հորինվում է «Սովետական դեմպինգի» և Սովետական Միության մեջ իբրև թե գործադրվող «հարկադիր աշխատանքի մասին» հերյուրանքը։ ԱՄՆ-ի, Ռումինիայի և Ֆրանսիայի կառավարությունները օրենքներ են հրապարակում սովետական ապրանքների ներմուծումներն արգելելու մասին։ Հռոմի պապը «խաչակրաց արշավանք» է հայտարարում Սովետական իշխանության դեմ, և այս բոլորը հետապնդում էր մի նպատակ՝ կազմակերպել հասարակական կարծիքը ընդդեմ սոցիալիզմի երկրի։

Ամերիկայի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները զիջումներ էին անում ճապոնական ագրեսորներին Չինաստանում, որպեսզի հեշտացնեն նրանց հարձակումը սովետական հեռավոր արևելյան սահմանների վրա։ Ճապոնական իմպերիալիստների հետ միասին նրանք կազմակերպում և ղեկավարում էին Չին-արևելյան երկաթուղին գրավելու գործը։ Կազմակերպում, ֆինանսավորում և ղեկավարում էին բասմաչիական բանդաների հարձակումները սահմանամերձ սովետական խաղաղ գյուղերի ու քաղաքների վրա։

[1] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 694, Հայքաղհրատ, 1940 թ., 11-րդ հրատարակություն։

Կապիտալիստական շրջապատման այդ «թշնամական գործունեությունն ընդդեմ ՍՍՌՄ-ի առանձնապես ուժեղանում է այն ժամանակից, երբ Գերմանիայում, Ճապոնիայում իշխանության գլուխ են անցնում ֆաշիստները»։[1]

Սովետական պետության և սովետական ժողովրդի ոխերիմ թշնամիները՝ տրոցկիստները, զինովևականները, բուխարինականները հանդիսանում էին իմպերիալիստների գործակալները, գերմանա-ճապոնական ֆաշիստների անարգ ծառաներն ու ագենտները, որոնց միջոցով տեռոր ու դիվերսիա, վնասարարություն ու լրտեսություն էին կազմակերպում սովետական երկրի ներսում։ Նրանք պատրաստում էին ՍՍՌՄ-ի պարտությունը՝ իմպերիալիստների կողմից ՍՍՌՄ-ի վրա հարձակվելու դեպքում։

Իրենց տերերի թելադրանքով, դեպի սովետական իշխանությունը գազանային ատելությամբ լցված հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակները նույնպես պլաններ էին մշակում Հայաստանում բուրժուական կարգերը վերականգնելու համար։ Իմպերիալիստական հետախուզությունների այդ գործակալների կուրսն էր կուլակային զինված ելույթներ կազմակերպել սովետական իշխանության դեմ, վնասարարության և դիվերսիայի միջոցով կասեցնել Սովետական Հայաստանի առաջխաղացումը։

Ճապոնական ֆաշիստները սպառնում էին զավթել սովետական Հեռավոր Արևելքը, իսկ արևմուտքից մեր սահմաններին սպառնում էր ֆաշիստական Գերմանիան։ Հասկանալի է, որ Սովետական պետությունը չէր կարող անտարբերությամբ անցնել այս փաստերի կողքով, հետևապես անհրաժեշտ էր ամրացնել մեր երկրի պաշտպանունակությունը՝ ինտերվենտների բոլոր փորձերին հակահարված տալու համար։

Միջազգային այդպիսի լարված իրադրության պայմաններում ՍՍՌՄ-ի ինդուստրացման լենինյան-ստալինյան քաղաքականության հաղթանակը ապահովեց ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը, որի հիման վրա ապահովվեց մեր երկրի ինքնուրույնությունը, ամրացվեց նրա պաշտպանունակությունը։

* *

Ինդուստրացման լենինյան-ստալինյան ուսմունքի կենսագործման շնորհիվ կարճ ժամանակամիջոցում արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ բարձրացավ։ Առանձնապես վիթխարի տեմպերով էր զարգանում սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը։

Սոցիալիստական ինդուստրացման քաղաքականության հաղթանակի հետևանքով «արդյունաբերության տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության ընդհանուր սիստեմում արդեն սկսում է գերազանցել գյուղատնտեսության տեսակարար կշռից և մենք գտնվում ենք ագրարային երկրից ինդուստրիալ երկիր դառնալու նախօրյակին»։[2]

Չնայած, որ գյուղատնտեսությունն իր համախառն արտադրանքով արդեն գերազանցում էր նախապատերազմյան մակարդակին, բայց չափազանց ետ էր մնում արդյունաբերության զարգացման տեմպերից, քաղաքի արագո-

[1] ՀԱՄԿ(բ)Պ Պատմություն, համառոտ դասընթաց, էջ 450—451։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 298։

բեն աճող պահանջներից։ Ժողովրդական տնտեսության ընդհանուր զարգացմանը սպառնացող գյուղատնտեսության հետամնացությունը, որը նրա մանրատվածության, գյուղի կուլտուրական ցածր մակարդակի և գյուղատնտեսական հետամնաց տեխնիկայի հետևանք էր, անհրաժեշտ էր վերացնել, առավելագույն չափով բարձրացնել նրա ապրանքայնությունը և ապահովել սոցիալիզմի կառուցումը գյուղում։

1929 թվի դեկտեմբերի 27-ին մարքսիստ-ադրարագետների կոնֆերենցիայում արտասանած իր ճառում ընկեր Ստալինը մատանանշում էր, որ այն դեպքում, երբ մեր սոցիալիստական արդյունաբերությունը ընդլայնված վերարտադրության սկզբունքով զարգանալու հետևանքով առաջ է դնում չտեսնված տեմպերով, գյուղատնտեսությունն իր մանրատվածության և հետամնացության պատճառով զուրկ է ընդլայնված վերարտադրության սկզբունքով զարգանալու հնարավորությունից։ Ավելին՝ միշտ չէ, որ նա հնարավորություն ունի իրականացնելու մինչև իսկ պարզ վերարտադրությունը։

Ընկեր Ստալինն ասում էր, «կարելի է արդյոք քիչ թե շատ երկարատև ժամանակաընթացքում Սովետական իշխանությունն ու սոցիալիստական շինարարությունը խարսխել երկու տարբեր հիմքերի վրա՝ ամենախոշոր ու միավորված սոցիալիստական արդյունաբերության հիմքի վրա և ամենամասնատված ու հետամնաց մանր-ապրանքային գյուղացիական տնտեսության հիմքի վրա։ Ո՛չ, չի կարելի։ Այդ երբևէ պետք է վերջանա ամբողջ ժողովրդական տնտեսության լիակատար փլուզումով»։[1] Հետևապես, անհրաժեշտ է ստեղծել խոշոր ընդլայնված վերարտադրության ու կուտակման ընդունակ գյուղատնտեսություն։

Ընկեր Ստալինը մատնանշում էր, որ մեր ինդուստրիան ամբողջ ժողովրդական տնտեսության, ներառյալ և գյուղատնտեսության ղեկավար սկզբունքն է, այն բանալին, որի օգնությամբ կարելի է հետամնաց բաժանբաժան հողագործությունը վերակառուցել կոլեկտիվ սկզբունքով։ Միևնույն ժամանակ ընկեր Ստալինը հիշեցնում էր, որ «եթե ինդուստրիան առաջատար սկզբունք է, ապա գյուղատնտեսությունն ինդուստրիայի զարգացման բազա է թե որպես ինդուստրիայի արտադրանքը կլանող շուկա, թե որպես հումք ու մթերք հայթայթող և թե որպես էքսպորտային ռեզերվների աղբյուր, որոնք անհրաժեշտ են ժողովրդական տնտեսության կարիքների համար սարքավորում ներմուծելու համար»։[2]

Չի կարելի ինդուստրիան առաջ տանել, ասում է ընկեր Ստալինը, երբ գյուղատնտեսությունը մնում է հետամնաց տեխնիկայի պայմաններում, երբ այն չի վերակառուցված և իր զարգացման տեմպերով չի մոտեցված ինդուստրիային։ Հետևաբար անհրաժեշտ է առավելագույն չափով գյուղատնտեսությունն ապահովել արտադրության միջոցներով, նորագույն տեխնիկայով, որի օգնությամբ էլ արագացնել նրա վերակառուցման գործը։[3]

Այդ ժամանակ գյուղատնտեսության տեխնիկական զինվածությունը չափազանց հետամնաց էր, արորը իշխում էր գյուղատնտեսական արտադրության մեջ։ Պարզ է, որ գյուղատնտեսության վերակառուցումը անհնարին կլի-

---

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 163։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 288։
[3] Նույն տեղում, էջ 289։

ներ, առանց նորագույն տեխնիկայի՝ տրակտորների, կոմբայնների և այլ առաջավոր գյուղատնտեսական մեքենաների։

Այսպիսով, ամբողջ երկրի էկոնոմիկայի, այդ թվում նաև գյուղատնտեսության վերակառուցման համար վճռական դեր կատարեց սոցիալիստական ինդուստրիան, մանավանդ նրա միջուկը հանդիսացող՝ մեքենաշինությունը։

Աջ կապիտուլանտները փորձում էին խափանել պարտիայի կողմից ընդունված ինդուստրացման տեմպերը, արգելակել երկրի ինդուստրացման գործը, հետևապես արգելակել նաև գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։

Ջախջախելով աջ օպորտունիստների դիմադրությունը, մերկացնելով նրանց դավաճանական քաղաքականությունը, ընկեր Ստալինը գլխավորում է պարտիային և բանվոր դասակարգին՝ ինդուստրիայի զարգացման բոլշևիկյան տեմպերը ապահովելու համար, որը նախադրյալներ ստեղծեց Ստալինյան հնգամյակի կատարման ու գերակատարման և գյուղատնտեսության տեխնիկական վերազինման համար։

ՍՍՌՄ-ի սոցիալիստական ինդուստրացումը հանդիսացավ գյուղատնտեսության վերակառուցման բանալին։ Գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը հասունացավ օրինաչափորեն երկրի ամբողջ տնտեսական և հասարակական զարգացման հիման վրա՝ դառնալով պատմական անհրաժեշտություն։

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը ընկեր Ստալինը համարում է մեր երկրում սոցիալիզմի կառուցման բաղկացուցիչ մասը։ «Հացի պրոբլեմը,— ասում է ընկեր Ստալինը,— գյուղատնտեսության պրոբլեմի մի մասն է, իսկ գյուղատնտեսական պրոբլեմը մեր երկրում սոցիալիզմ կառուցելու պրոբլեմի մի բաղկացուցիչ մասն է»։[1]

Գյուղատնտեսությունն իր հետամնացությունից դուրս բերելու և հացի պրոբլեմը լուծելու համար անհրաժեշտ էր գյուղատնտեսական մանր, սակավապրանքային տնտեսությունները միավորել, խոշորացնել։

Ընկեր Ստալինը ասում էր, որ գյուղատնտեսության խոշորացման համար կա միայն երկու ուղի՝ կամ կապիտալիստական, որի էությունը գյուղատնտեսության խոշորացումն է՝ նրա մեջ կապիտալիզմն արմատավորելու միջոցով, մի ուղի, որը տանում է դեպի գյուղացիության աղքատացումը և դեպի կապիտալիստական ձեռնարկությունների զարգացումը գյուղատնտեսության մեջ, կամ սոցիալիստական, որի էությունը կոլխոզների և սովխոզների արմատավորումն է գյուղատնտեսության մեջ, որը տանում է դեպի մանր գյուղացիական տնտեսությունների միավորումը խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ, որոնք զինված են տեխնիկայով ու գիտությամբ և հնարավորություն ունեն զարգանալու, քանի որ նրանք ընդունակ են իրագործել ընդլայնված վերարտադրություն։[2]

Գյուղատնտեսության խոշորացման կապիտալիստական ուղին պաշտպանում էր տրոցկիստական և բուխարինական-ռիկովյան՝ կապիտալիզմի restավրատորների դավաճանական բլոկը։

Բոլշևիկների պարտիան և սովետական պետությունն ընտրեցին գյուղա-

---

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 11, էջ 6։

[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 163—164։

տնտեսության վերակառուցման սոցիալիստական ուղին, Լենինի և Ստալինի ցույց տված ուղին։

Լենինի և Ստալինի ուսմունքը գյուղատնտեսության կոլեկտիվացման մասին— դա մի երկրում սոցիալիզմի կառուցման հնարավորության տեսության բաղկացուցիչ մասն էր։ Իսկ Լենինի կոոպերատիվ պլանը՝ գյուղատնտեսությունը կոոպերացիայի միջոցով սոցիալիզմի կառուցման ընդհանուր շինարարության մեջ ընդգրկելու միակ և ճիշտ ճանապարհը։

Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ կոլխոզային շարժումը կոոպերատիվ շարժման մի ձևն է, նրա ավելի բարձր ձևը, որ կոլխոզները կոոպերացիայի մի տեսակն են, Լենինի կոոպերատիվ պլանի անխզելի, բաղկացուցիչ մասը։ Գյուղացիներին կոոպերացիայի այդ բարձր ձևին՝ կոլեկտիվ մասսայական շարժմանը հասցնելու համար, անհրաժեշտ էր լուրջ կերպով նախապատրաստել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործը, որը կատարվեց ընկեր Ստալինի գլխավորությամբ՝ համատարած կոլեկտիվացմանը նախորդող շրջանում։

Ընկեր Ստալինը մշակեց և զարգացրեց Լենինի կոոպերատիվ պլանը և տվեց գյուղատնտեսության կոլեկտիվացման ուսմունքը։

Ընկեր Ստալինը ցույց տվեց, որ կոլխոզային շինարարության հիմնական ու գլխավոր օղակը ներկա էտապում գյուղատնտեսական արտելն է, որը գյուղացիներին հասկանալի է և հնարավորություն է տալիս կոլխոզնիկների անձնական շահերը զուգակցելու նրանց հասարակական շահերի հետ։ Ընկեր Ստալինը հիմնավորեց կուլակության սահմանափակման և արտամղման քաղաքականությունից համատարած կոլեկտիվացման հիման վրա նրան, որպես դասակարգի, վերացնելու քաղաքականության անցումը, բացահայտեց ՄՏԿ-ների նշանակությունը, որպես գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մեծագույն հենակետերի։

Զինված գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լենինյան-ստալինյան ուսմունքով, բոլշևիկների պարտիան և սովետական իշխանությունը խոշոր աշխատանք կատարեցին գյուղում՝ մասսայական կոլեկտիվ շարժում ստեղծելու համար։

Գյուղի վերակառուցման գործում խոշոր նշանակություն ունեցան և էֆեկտիվ դեր կատարեցին տրակտորային շարասյուները, ՄՏԿ-ները, նրանց հետ կապված ցանքերի կոնտրակտացիայի միջոցը և սովխոզները։

Հաշվի առնելով տրակտորային շարասյուների աշխատանքի դրական փորձը և առաջին ՄՏԿ-ների աշխատանքի արդյունքները, պարտիան և կառավարությունը որոշեցին զարկ տալ ՄՏԿ-ների կազմակերպման գործին։

Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի 1929 թ. հունիսի 5-ի որոշումը ՄՏԿ-ների լայն շինարարության սկիզբ դրեց։

Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը առաջարկեց Տրակտորկենտրոնին 1929—1930 թ. թ. ընթացքում կազմակերպել 102 մեքենա-տրակտորային կայան։

ՄՏԿ-ները և տրակտորային շարասյուները խթան հանդիսացան գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար, մեծապես նպաստելով կոլխոզային շարժման ծավալմանը։

Գյուղատնտեսության բնագավառում 1929 թվին տեղի ունեցած արմատական բեկումը բնորոշ է նրանով,որ մի շարք շրջաններում աշխատավոր

գյուղացիության հիմնական մասսաները անհատական, մանրատված տնտեսություններից շրջադարձ կատարեցին դեպի խոշոր սոցիալիստական տնտեսությունը։ Մեր պարտիային հաջողվեց այդ խոշոր, պատմական նշանակություն ունեցող բեկումն առաջ բերել բուն իսկ գյուղացիության ընդերքում, որի հետևանքով կոլխոզային շարժումը նոր, խոշոր թափ ստացավ։ Գյուղատնտեսության զարգացման մեջ կատարված այդ արմատական բեկման հիմքն այն էր, որ միջակ գյուղացին կտրեց իր կապերը մասնավոր սեփականատիրական, անհատական տնտեսությունից և գյուղի չքավորների հետ միասին դարձավ գյուղում սոցիալիզմի ակտիվ շինարար։ Կոլխոզային շարժումը թևակոխեց համատարած կոլեկտիվացման շրջանը։ Այդպիսով մեր երկիրը մտավ գյուղատնտեսության արմատական վերակառուցման և հողագործության խոշորացման ծավալուն էտապը։

Ընկեր Ստալինն իր «Ագրարային քաղաքականության հարցերի շուրջը ՍՍՌՄ-ում» կլասիկ աշխատության մեջ բազմակողմանիորեն հիմնավորեց գյուղի կապիտալիստական տարրին սահմանափակելու և արտամղելու քաղաքականությունից, կուլակին, որպես դասակարգի, լիկվիդացնելու քաղաքականության անցումը։

Ընկեր Ստալինը հանճարեղ խորաթափանցությամբ ցույց տվեց, որ մեր երկրում տեղի են ունեցել դասակարգային ուժերի այնպիսի տեղաշարժեր, որոնք հնարավորություն են տալիս հացի կուլակային արտադրությունը փոխարինել կոլխոզների ու սովխոզների արտադրությամբ։

«Հիմա մենք բավարար նյութական բազա ունենք,— ասում է ընկեր Ստալինը մարքսիստ-ագրարագետների կոնֆերենցիայում արտասանած իր ճառում,— կուլակությանը հարվածելու, նրա դիմադրությունը կոտրելու, նրան, որպես դասակարգի, լիկվիդացնելու և նրա արտադրությունը կոլխոզների ու սովխոզների արտադրությամբ փոխարինելու համար»։[1]

Առաջադրելով կուլակությունը որպես դասակարգի լիկվիդացնելու խնդիրը, ընկեր Ստալինը ելնում էր այդ ժամանակաշրջանում երկրում ծավալվող կոլխոզների և սովխոզների շինարարության վիթխարի նվաճումներից, հացի ապրանքային բաժինը նրանց կողմից մեծապես ավելացնելու ռեալ հնարավորությունից։

1929—1930 թ. թ. համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակությունը էքսպրոպրիացիայի ենթարկվեց հօգուտ կոլխոզների, այնպես, ինչպես 1918 թվականին էքսպրոպրիացիայի ենթարկվեց կապիտալիստների արտադրությունը հօգուտ պրոլետարական պետության։

Համատարած կոլեկտիվացման հիման վրա, կուլակությունը որպես դասակարգ լիկվիդացնելու գործում խոշոր նշանակություն ունեցավ ՍՍՌՄ-ի Կենտգործկոմի և Ժողկոմսովետի 1930 թվի փետրվարի 1-ի դեկրետը, որը տեղական կազմակերպություններին ու աշխատավոր գյուղացիներին ճիշտ դիրքավորում տվեց։

Դեկրետը համատարած կոլեկտիվացման շրջաններում վերացրեց հողի վարձակալությունը և վարձու աշխատանքի գործադրումը անհատական տնտեսությունների մեջ։ Դրանով հիշված ռայոններում ընդմիշտ փակվում էին կապիտալիստական շահագործման աղբյուրները։ Իշխանության տեղական օր-

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 189։

գաններին իրավունք էր վերապահվում համատարած կոլեկտիվացում հայտարարված շրջաններում անհրաժեշտ միջոցներ գործադրել կուլակության դեմ, մինչև իսկ նրանց ունեցվածքի բռնագրավումն ու նրանց արտաքսումը ռայոնի, մարզի սահմաններից։ Բռնագրավման ենթարկվող կուլակային տնտեսությունների ունեցվածքը տրվելու էր կոլխոզների անբաժանելի ֆոնդին՝ կոլխոզի մեջ մտնող չքավորների և բատրակների մուտքի վճարի դիմաց։

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլուցիային հավասար նշանակություն ունեցավ։ «Այդ ռևոլուցիոն ամենախոր հեղաշրջում էր, մի թռիչք հասարակության հին որակական կացությունից դեպի նոր որակական կացությունը, մի հեղաշրջում, որն իր հետևանքներով 1917 թվականի հոկտեմբերի ռևոլուցիոն հեղաշրջմանը հավասար նշանակություն ուներ։

Այս ռևոլուցիայի յուրօրինակությունն այն էր, որ այն կատարվեց վերևից, պետական իշխանության նախաձեռնությամբ, որին ցածրից ուղղակի կերպով օգնում էին գյուղացիների միլիոնավոր մասսաները, որոնք պայքարում էին ընդդեմ կուլակային ստրկության, հանուն կոլխոզային ազատ կյանքի»։[1]

Նա մեկ հարվածով վճռեց սոցիալիստական շինարարության հետևյալ երեք արմատական հարցերը։

ա) Նա լիկվիդացրեց մեր երկրի ամենաբազմամարդ շահագործող դասակարգը, կուլակների դասակարգը, որը հանդիսանում էր կապիտալիզմի ռեստավրացիայի պատվարը։

բ) Նա կապիտալիզմ ծնող անհատական տնտեսության ուղուց կոլխոզային՝ սոցիալիստական տնտեսության ուղին փոխադրեց մեր երկրի ամենաբազմամարդ աշխատավոր դասակարգը, գյուղացիների դասակարգը, և վերջապես.

գ) Նա սովետական իշխանությանը սոցիալիստական բազա տվեց ժողովրդական տնտեսության ամենարնդարձակ ու կենսականորեն անհրաժեշտ, բայց և ամենահետամնաց բնագավառում՝ գյուղատնտեսության մեջ։[2]

1929 թվի վերջերից Հայաստանում նույնպես արմատական բեկում սկսվեց կոլխոզային շարժման բնագավառում, աշխատավոր գյուղացիության հիմնական մասը պատմական շրջադարձ կատարեց դեպի կոլեկտիվ-հանրային տնտեսությունը։

Սովետական Հայաստանի ինդուստրացումը, որ ձեռք բերվեց պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության կիրառման շնորհիվ, մեծ ազդակ էր գյուղի վերակառուցման համար։ Գյուղատնտեսության կոլեկտիվացման գործում մեծ նշանակություն ունեցավ ռեսպուբլիկայում ստեղծված գյուղատնտեսական կոոպերացիայի լայն ցանցը, որը միավորում էր բազմահազար բամբակագործների, այգեգործների, շերամապահների և այլն։

Հայաստանի գյուղատնտեսական-արտադրական կոոպերացիան և կոոպերացիայի մյուս ճյուղերը գյուղացիական տասնյակ հազարավոր տնտեսություններ նախապատրաստեցին կոոպերացիայի ավելի բարձր՝ կոլխոզային ձևին անցնելու համար։

---

[1] Համկ(բ)Կ Պատմություն, համառոտ դասընթաց. էջ 418, 1946 թ.։

[2] Նույն տեղում։

Ռեսպուբլիկայում զգալի ծավալ էր ստացել նաև սովխոզ շինարարությունը։ Այս բոլորը հանդիսացավ բազա՝ կոլխոզային շինարարության նոր էտապի համար։

Պարտիայի և կառավարության մարտական որոշումները, ընկեր Ստալինի իմաստուն պատմական ցուցումները գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մասին՝ մեծագույն խթան հանդիսացան Հայաստանում կոլխոզային շինարարության նոր վերելքի համար։

1929 թվի վերջերից և 1930 թվի սկզբից սկսվեց աշխատավոր գյուղացիների մասսայական հոսանքը դեպի կոլխոզները։ Մինչև փետրվարի վերջերը ռեսպուբլիկայի չքավոր ու միջակ գյուղացիների զգալի մասը կոլեկտիվացվեց։ Մի շարք շրջաններում առանձին գյուղեր կանգնած էին համատարած կոլեկտիվացման շեմքին։ Համատարած կոլեկտիվացման ուղին էին բռնել բամբակացան շրջանների աշխատավոր գյուղացիները։

1930 թվի հունվարին Սարդարաբադում (այժմ Հոկտեմբերյան) կազմակերպվեց առաջին մեքենատրակտորային կայանը Հայաստանում։

1930 թվի հունվարի 5-ին, ընկեր Ստալինի առաջարկով, ՀամԿ(բ)Պ Կենտկոմը ընդունեց «Կոլեկտիվացման տեմպի և կոլտնտեսական շինարարությանը պետության կողմից օգնելու ձեռնարկումների մասին» որոշումը, որը խոշորագույն նշանակություն ունեցավ պարտիայի և կառավարության նոր քաղաքականությունը կենսագործելու ուղղությամբ։ Կարճ ժամանակամիջոցում ամրապնդվեց կոլխոզային կարգի հաղթանակը և կուլակին որպես դասակարգ վերացնելու գործը։ Կենտկոմը նշեց, որ վերջին ամիսների ընթացքում կոլխոզային շարժումը մի նոր քայլ է արել դեպի առաջ, որ կոլխոզշարժման պլաններով ուրվագծված բոլոր տեմպերն արդեն գերազանցված են, որ կոլխոզային շարժումը ընդգրկում է ոչ միայն անհատական տնտեսությունների առանձին խմբեր, այլև ամբողջ ռայոններ ու գավառներ։[1]

Հաշվի առնելով զանազան ռայոնների տարբեր մակարդակի նախապատրաստությունը կոլեկտիվացման համար, Կենտկոմը որոշեց կոլեկտիվացման տեմպի տեսակետից ՍՍՌՄ-ը բաժանել երեք հիմնական խմբի։ Հացահատիկային հիմնական շրջանները՝ Հյուսիսային Կովկասը, Միջին և Ներքին Վոլգան դասվեցին առաջին խմբում։ Այս վայրերում նախատեսվում էր կոլեկտիվացումն ավարտել 1931 թվի գարնանը։ Հացահատիկային շրջանների երկրորդ խմբում դասվեցին Ուկրաինան, կենտրոնական սևահողային մարզերը, Սիբիրը, Ուրալը, Ղազախստանը։ Այս վայրերում կոլեկտիվացումը պետք է ավարտվեր 1932 թվականի գարնանը։ Վերջապես, երրորդ խումբ ռայոններում՝ Մոսկվայի մարզում, Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում, Միջին Ասիայում և մնացած վայրերում նախատեսվում էր կոլեկտիվացումն ավարտել 1933 թվին, այսինքն հնագամյակի վերջում։[2]

ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն տեղական պարտիական ու սովետական կազմակերպություններին ցուցում տվեց կոլեկտիվացման գործը ճիշտ կազմակերպելու, և որ գլխավորն է լենինյան կամավորության սկզբունքը չխախտելու, այն վերևից չդեկրետավորելու մասին, մի բան, որ կարող էր «կոլտնտեսությունները կազմակերպելու իսկական սոցիալիստական մրցումը

[1] ВКП(б) в резолюциях, часть II-я, стр. 661—662.
[2] Նույն տեղում։

կոլեկտիվացման խաղով փոխարինելու վտանգն ստեղծել»։[1]

Կենտկոմի այս դիրեկտիվները, գյուղատնտեսության կոլեկտիվացման լենինյան-ստալինյան սկզբունքները Հայաստանի մի շարք շրջաններում կոպիտ կերպով խախտվեցին։

Առանձին շրջանների նկատմամբ կոնկրետ մոտեցում չցուցաբերվեց, հաշվի չառնվեց յուրաքանչյուր շրջանի առանձնահատկությունը և նրա պատրաստ լինելը համատարած կոլեկտիվացման համար։

Օրինակ, Երևանի գավառի մի շարք շրջանների նկատմամբ ուրվագծվել էր կոլեկտիվացման տոկոսը և ժամկետը։ Այնպիսի շրջաններ, ինչպիսիք էին Բասարգեչարի, Սիսիանի և այլ շրջանները, հայտարարված էին համատարած կոլեկտիվացման շրջաններ, որտեղ այդ բանի համար դեռևս չէին ստեղծվել լրիվ պայմաններ։ Կոլխոզային շարժման զարգացման հիման վրա սկսված միանգամայն առողջ սոցիալիստական մրցումը փոխարինելով «դեկրետավորումով», ժողովրդի քողարկված թշնամիները, որոնք հետագայում մերկացվեցին, թույլ տվին «կոլեկտիվացում խաղալուն», վարչական մեթոդների կիրառման վնասաբեր գիծ։ Միջակի նկատմամբ մի շարք վայրերում ուժ գործադրվեց, եղան նրանց ապակուլակացման ենթարկելու դեպքեր։ Սկզբունքային սխալներ կատարվեցին կոլխոզային շարժման արտելային ձևի պայմաններում արտադրական միջոցների համայնացման մասին ՀամԿ(բ)Պ Կենտկոմի ու կառավարության դիրեկտիվների կենսագործման գծով, թույլ տալով «ձախ», հակաբոլշևիկյան պրակտիկա։

Աշխատավոր գյուղացիության պատմական շրջադարձը դեպի սոցիալիզմի ուղին, կոլխոզային շինարարության բնագավառում ձեռք բերված խոշոր հաջողությունները հանդիպում էին դասակարգային թշնամու կատաղի դիմադրությանը։ Կուլակը և նրա գործակալները օրհասական պայքար էին մղում իրենց գոյությունը պահպանելու համար։ Նրանք դիմում էին դարանամուտ սպանությունների, այրում էին կոլխոզների ունեցվածքը և այլն։ 1930 թվի փետրվարի 2-ին Ղամարլուի շրջանի կուլակների ձեռքով սպանվեցին Աղրաշի (ներկայումս Արևշատ) այգեգործական ընկերության նախագահ Արտաշ Միրզոյանը և գանձապահ Ջավեն Սարդսյանը։

Նույն օրը Յուվա գյուղի կուլակները կազմակերպում են բատրակ, ակտիվ կոմերիտական Թորգոմ Սարգսյանի սպանությունը։[2]

Ապարանի շրջանի Ղարաքիլիսա (ներկայումս Հարթավան) գյուղի կուլակները կազմակերպեցին կոլխոզի վարչության քարտուղար, ակտիվ կոլխոզնիկ Ա. Եղիազարյանի սպանությունը։ Այդ սպանության 6 կազմակերպիչ կուլակները սովետական դատարանի կողմից մերկացվեցին և խիստ պատժվեցին։[3]

Կուլակները կատաղի փորձեր են անում կոլխոզների գարնանացանը վիժեցնելու համար։ Նրանք այրում են Իշևանի, Դսեղի, Գյոլքենգի, Ղուլալիի, Ջարխեջի և մի շարք այլ գյուղերի կոլխոզների և Մարտունու վարկային ընկերության անասնակերը։ Այս կապակցությամբ տեղի ունեցան դատավարություններ Դիլիջանում, Ղարաքիլիսայում և ուրիշ վայրերում։ Կուլակը պայքարում էր ամեն հնարավոր միջոցներով։ Նա վարկաբեկիչ, պրովոկացիոն լու-

[1] ВКП(б) в резолюциях, часть II, стр. 661—662.
[2] «Մահկալ» № 14, 1930 թ.։
[3] «Մահկալ», № 83, 1930 թ.։

բեր էր տարածում կոլխոզի դեմ։ Իր հակակոլխոզային ագիտացիայի մեջ նա ճարպկորեն օգտագործում էր կոլխոզային շարժման գործում տեղ գտած սխալներն ու շեղումները։ Նա փորձում էր կոլխոզի դեմ օգտագործել նաև գյուղի չքավոր ու միջակ հետամնաց որոշ տարրերին։ Կուլակային ագիտացիայի հետևանքով, «ձախ» շեղումների շնորհիվ, զգալի վնաս հասցվեց նաև անասնապահությանը։

Կուլակին և գյուղի հակասովետական տարրերին օգնում էին աջ դավաճանները, որոնց հետ նրանք միացյալ ճակատ էին կազմել պարտիայի գլխավոր գծի դեմ։

Կոլխոզային շարժման բնագավառում լենինյան-ստալինյան գծից կատարված շեղումների և դասակարգային թշնամու պրովոկացիոն գործողությունների հետևանքով կոլխոզներից որոշ քանակով գյուղացիներ հեռացան։

Սովետական իշխանության ներքին և արտաքին թշնամիները, ինտերվենտները և նրանց գործակալները հույս ունեին, որ տեղերում կատարված սխալներն ու խոտորումները «գյուղացիությանը կզայրացնեն, խռովություններ առաջ կբերեն սովետական իշխանության դեմ»։[1] Ընկեր Ստալինը, բոլշևիկների պարտիան ժամանակին նկատեցին այդ վտանգը և այն արմատախիլ արվեց։

Հարկավոր եղավ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի և անձամբ ընկեր Ստալինի միջամտությունը, որպեսզի պարտիական կազմակերպությունները ձեռնամուխ լինեն թույլ տրված ծռումները շտկելուն, սխալների ուղղմանը։

1930 թ. մարտի 2-ին Կենտկոմի որոշմամբ հրապարակվեց ընկեր Ստալինի «Գլխապտույտ հաջողություններից» հոդվածը։ Այդ հոդվածում ընկեր Ստալինը ջախջախիչ հակահարված տվեց «ձախ» խոտորումներին, մերկացրեց նրանց, որպես աջ օպորտունիզմին օգնողների, որոնք սպառնում էին վիժեցնել կոլխոզշարժումը։ Ընկեր Ստալինը ցույց տվեց, որ գյուղի պատմական շրջադարձը դեպի սոցիալիզմը կարելի է ապահովված համարել, ուստի պարտիայի խնդիրն այն է, որպեսզի ամրացնի նվաճված հաջողությունները և այն օգտագործի հետագա առաջխաղացման համար։

Ընկեր Ստալինը մատնանշում էր, որ «ՍՍՌՄ տարբեր շրջանների պայմանների բազմազանության հաշվառման սկզբունքը, կամավորության սկզբունքի հետ միասին, կոլխոզային առողջ շարժման ամենալուրջ նախադրյալներից մեկն է»։[2] Հետևապես նրանք, ովքեր աչքաթող են անում այս կարևոր սկզբունքները, լուրջ կերպով հարվածում են կոլխոզշարժման գործին և օգնում են մեր թշնամիներին։ Այնուհետև ընկեր Ստալինը նշում էր, որ կոլխոզշինարարության «հիմնական օղակը, նրա գերակշռող ձևը, որին հարկավոր է այժմ կառչել, զուղատնտեսական արտելն է»։[3]

Ընկեր Ստալինը օգնեց ըմբռնելու կատարված սխալների քաղաքական ամբողջ լրջությունը և մոբիլիզացրեց պարտիական կազմակերպություններին՝ տեղերում թույլ տված սխալները ուղղելու համար և մահացու հարված հասցրեց սովետական իշխանության թշնամիներին։

---

[1] ՀամԿ(բ)Պ Պատմություն, համառոտ դասընթաց, էջ 421։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 218—219։
[3] Նույն տեղում, էջ 221։

1930 թ. մարտի 15-ին «Պրավդա» թերթը տպագրեց ՀամԿ(բ)Պ Կենտկոմի «Կոլխոզային շարժման մեջ պարտիական գծի շեղումների դեմ պայքարելու մասին» պատմական որոշումը, որտեղ ընկեր Ստալինի հոդվածում առաջ քաշված սկզբունքների հիման վրա Կենտկոմը մի շարք միջոցառումներ է առաջադրում թույլ տրված «ձախ» խեղումներն անհապաղ ուղղելու համար։ Կենտրոնական Կոմիտեն գրում էր, որ «այդ բոլոր ծռումները հանդիսանում են կոլխոզշարժման հետագա աճման հիմնական արգելակը և ուղղակի օգնություն են մեր դասակարգային թշնամիներին»։[1]

Հետևապես՝ այդ սխալների վերացումը մի կողմից կնպաստեր կոլխոզային շարժման նոր, ավելի մասսայական վերելքին, մյուս կողմից՝ մահացու հարված կհասցներ դասակարգային թշնամուն։

Ընկեր Ստալինի «Գլխապտույտ հաջողություններից» հոդվածը և ՀամԿ(բ)Պ Կենտկոմի հիշված որոշումը լայն արձագանք գտան ամբողջ երկրում։ Ընկեր Ստալինը բազմաթիվ նամակներ ստանալով կոլխոզնիկներից ու աշխատողներից՝ կոլխոզշինարարության ասպարեզում պարտիայի քաղաքականության վերաբերյալ, Կենտկոմի որոշմամբ 1930 թ. ապրիլի 3-ին հրապարակեց իր «Պատասխան ընկեր կոլխոզնիկներին» հռչակավոր հոդվածը, որտեղ նա բացահայտեց կոլխոզշարժման գործում կատարված սխալների արմատները։ Այդ սխալների արմատը կայանում էր դեպի միջակ գյուղացին ցուցաբերած սխալ մոտեցման մեջ, միջակի հետ ունեցած տնտեսական հարաբերությունների բնագավառում բռնություն թույլ տալու մեջ,— ասում է ընկեր Ստալինը,— կոլխոզային շինարարության հարցում կամավորության լենինյան սկզբունքի խախտման մեջ։ Իր այս հոդվածում ընկեր Ստալինը նորից է ընդգծում, որ «խախտել են լենինյան այն սկզբունքը, ըստ որի կոլխոզային շինարարության նկատմամբ անթույլատրելի է թռիչք գործել շարժման չավարտված ձևի վրայով»,[2] մոռանալով, որ կոլխոզային շարժման գլխավոր ձևը տվյալ մոմենտում գյուղատնտեսական արտելն է։ Ընկեր Ստալինը պարտիական կազմակերպություններին սովորեցնում էր, որ տվյալ մոմենտում «ձախ» խոտորիչների սխալների դեմ մղվող պայքարը հանդիսանում է աջ օպորտունիզմի դեմ հաջող պայքար մղելու պայմանն ու յուրօրինակ ձևը, որ «աջ օպորտունիզմի դեմ հաջողությամբ պայքարելու համար հարկավոր է հաղթահարել «ձախ» օպորտունիստների սխալները։ «Ձախ» ծռողներն օբեկտիվորեն հանդիսանում են աջ ուկլոնիստների դաշնակիցները»,[3]— գրում էր ընկեր Ստալինը։

1930 թվի ապրիլի 2-ին հրապարակվեց ՍՍՌՄ ԿԳԿ-ի և ԺԿՍ-ի դեկրետը «Կոլտնտեսությունների և նրանց անդամների նոր արտոնությունների մասին»։ Սովետական իշխանությունն այդ դեկրետով երկու տարով հարկադրումից ազատեց կոլխոզների հանրայնացված բոլոր անասունները և կոլխոզնիկների տրամադրության տակ եղած կովերը, խոզերը, ոչխարները և թռչունները։ Կառավարությունը մինչև 1930 թվի նոյեմբերի 1-ը երկարաձգեց վարկային հիմնարկներին կոլխոզնիկների պարտքերի վճարման ժամկետը, ազա-

---

[1] ВКП(б) в резолюциях, часть II, стр. 662—663.

[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 235։

[3] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 244։

տեց նրանց բոլոր տուգանքներից և դատական գանձումներից, որոնց նրանք ենթարկվել էին մինչև 1930 թվի ապրիլի 1-ը։ Դեկրետը նախատեսում էր 1930 թվի ընթացքում կոլխոզներին բաց թողնել 500 միլիոն ռուբլու վարկ։[1]

Ընկեր Ստալինի «Գլխապտույտ հաջողություններից» և «Պատասխան ընկեր կոլտնտեսականներին» հոդվածները, Կենտկոմի 1930 թվի մարտի 15-ի և ապա ապրիլի 2-ի որոշումը, և ԿԳԿ-ի ու ԺԿՍ-ի դեկրետը կոլխոզնիկներին տրվող արտոնությունների մասին՝ կարևորագույն նշանակություն ունեցան գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լենինյան-ստալինյան ծրագրի կենսագործման համար և լայն արձագանք գտան գյուղացիական մասսաների մեջ։

Նոր բեկում առաջացավ Հայաստանի աշխատավոր գյուղացիության լայն խավերի մեջ։ Կոլխոզները ամրացան։ Նոր հոսանք սկսվեց դեպի կոլխոզները։

1930 թ. ամառվա սկզբներին Հայաստանի բազմաթիվ վայրերում գումարվեցին կոլխոզնիկ-կոլխոզնիկուհիների շրջանային և ապա ռեսպուբլիկական խորհրդակցություններ, որոնք կարևոր նշանակություն ունեցան կոլխոզշարժման ամրացման գործում։

Ռեսպուբլիկական խորհրդակցությունը քննեց գյուղատնտեսության վերակառուցման հնգամյա պլանը և Հայաստանի կոլխոզային շինարարության հերթական խնդիրները։

Խորհրդակցությունը իր որոշումներում նշել է, որ կոլխոզների «հետագա զարգացման համար կենսական անհրաժեշտություն է գեղջկուհիների ներգրավումը կոլխոզներում» (այդ ժամանակ մենատնտես կանանց ընդգրկումը կոլխոզներում կազմում էր 4,4 տոկոս)։[2]

1930 թվի մայիսին գումարվեց Հայաստանի Կ(բ)Պ 7-րդ համագումարը, որն ամփոփեց 6-րդ և 7-րդ համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների աշխատանքները երկրի արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և կուլտուրայի բնագավառներում։ Համագումարն իր որոշումներում միջոցառումներ նշեց կոլեկտիվացման գործում թույլ տրված սխալները ուղղելու մասին։ Համագումարն ընդգծեց, որ կոլխոզային շարժման հետագա վերելքը ապահովելու համար անհրաժեշտ է շարունակել պայքարը «բոլոր սխալների և աղավաղումների վերացման» համար, սխալների ընդունումը հիշատակող բանաձևերից անցնել նրանց գործնական ուղղմանը։[3]

Պարտիայի և ընկեր Ստալինի ցուցումների հիման վրա սկսված աշխատանքը շուտով դրական արդյունքներ տվեց։ Օկրուգների վերակառուցումը և այդ հիման վրա կատարված շրջանայնացումը խոշոր չափով օգնեց ուժեղացնելու ռայոնական պարտիական, սովետական և մյուս կազմակերպությունների աշխատանքները, ղեկավարությունը ավելի մոտեցնելով գյուղին, կոլխոզին։ Մեծ քանակով նոր կադրեր ուղարկվեցին գյուղ։ Արդյունաբերական ձեռնարկություններն ուժեղացրին գյուղին օգնելու գործը, լայն ծավալ ստա-

---

[1] «Խորհրդային Հայաստան», № 1, 1930։

[2] ՀԱՄԿ(բ) Պ ԿԿ-ին կից Մարքսի—Էնգելսի—Լենինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 1, թ. 83։

[3] ՀԿ(բ)Պ 7-րդ համագումարի որոշումները, էջ 9, Պետհրատ։

ցավ շեֆական աշխատանքը, զգալի չափով ամրացավ բանվորների արտադրական-կուլտուրական կապը գյուղի և կոլխոզների հետ։ Կոլխոզային շարժման գործում սկսված բեկումը գնալով խորացավ։

Հայաստանում կոլխոզշարժման բնագավառում նոր վերելք է սկսվում 1930 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից։ Եթե սեպտեմբերի 1-ին Հայաստանում գոյություն ունեցող 380 կոլխոզներում ընդգրկված էր աշխատավոր գյուղացիների 9,5 տոկոսը, ապա 1930 թ. դեկտեմբերի 15-ին Հայաստանում կար 458 կոլխոզ, և կոլեկտիվացման տոկոսը հասնում էր 11,4-ի։ Ռեսպուբլիկայի աշխատավոր գյուղացիության լայն խավերն սկսում են ավելի մասսայականորեն մտնել կոլխոզները, որը ուղեկցվում էր դասակարգային սուր պայքարով։ Հայաստանի բոլշևիկները ՀամԿ(բ)Պ Կենտկոմի և անձամբ ընկեր Ստալինի ցուցումներով պայքար են սկսում կոլխոզները տնտեսապես և կազմակերպչորեն ամրացնելու, կոլխոզային արտադրությունը կազմակերպելու, դասակարգային թշնամու դիմակավորված գործունեությունը մերկացնելու և համատարած կոլեկտիվացումը ռեսպուբլիկայում 1933 թվին հիմնականում կենսագործելու համար։

* * *

Մեր երկրում սոցիալիզմի կառուցման գործում խոշոր նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)Պարտիայի 16-րդ համագումարը, որը գումարվեց 1930 թվի հունիսի 26-ին և պատմության մեջ մտավ որպես ընդհանուր ճակատով սոցիալիզմի ծավալուն հարձակման անցնելու համագումար, «Կուլակությունը, որպես դասակարգ, լիկվիդացնելու և համատարած կոլեկտիվացումը կենսագործելու համագումար»։[1]

Պարտիայի 16-րդ համագումարի որոշումները հսկայական թափ հաղորդեցին սոցիալիստական շինարարության գործին՝ թե արդյունաբերության, թե գյուղատնտեսության բնագավառում։ Հնգամյակը չորս տարում կատարելու համար ծավալված շարժումը համակեց ամբողջ երկրի աշխատավորներին, առաջացնելով արտադրական մեծ խանդավառություն։

Պարտիայի 15-րդ և 16-րդ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում ՍՍՌՄ տնտեսական և քաղաքական կյանքում խոշոր արմատական փոփոխություններ էին կատարվել։ Եթե սոցիալիստական շինարարության նախորդ էտապներում սոցիալիզմի հարձակումն իրականացվում էր ժողովրդական տնտեսության առանձին ճակատամասերում, ապա այժմ սկսվել էր սոցիալիզմի ընդհանուր ծավալուն հարձակման ժամանակաշրջանը, կապիտալիզմի վերջին հենարանը՝ կուլակությունը վերացնելու շրջանը։ Կուլակության լիկվիդացումը, որպես դասակարգի, տեղի էր ունենում գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացման հիման վրա։

Պարտիայի 16-րդ համագումարի նախօրյակին խոշոր արդյունաբերության գծով սոցիալիստական սեկտորը արդեն դարձել էր տիրապետող։ Մասնավոր տնտեսական սեկտորի տեսակարար կշիռը երկրի խոշոր արդյունաբերության արտադրանքի մեջ կազմում էր միայն 0,7 տոկոս։[2]

Վճռական տեղաշարժ էր տեղի ունեցել նաև ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերի համախառն արտադրանքի տեսակարար կշռի մեջ,

[1] Ի. Ստալին, Երկեր. հատ. 12, էջ 385։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 302։

1929—1930 տնտեսական տարում արդյունաբերության բաժինը կազմում էր 53 տոկոս, իսկ գյուղատնտեսության բաժինը՝ 47 տոկոս։ Այդ նշանակում էր, որ Սովետական Միությունը գտնվում էր «ագրարային երկրից ինդուստրիալ երկիր դառնալու նախօրյակին»։[1]

Կոլխոզային ծավալուն շինարարությունը, սովխոզների և ՄՏԿ-ների կառուցումը 1930 թվին ամուր բազա ստեղծեցին հացի կուլակային արտադրությունը կոլխոզների և սովխոզների արտադրությամբ փոխարինելու համար։ Բավական է հիշել, որ միայն կոլխոզները 1930 թվականին պետությանը հանձնեցին երկրում արտադրվող հացի ամբողջ ապրանքային արտադրանքի կեսից ավելին։ 1930 թվին կոլխոզների ցանքերի տարածությունը կազմում էր 36 միլիոն հեկտար, իսկ բոլոր սովխոզների տարածությունը հասնում էր 3,8 միլիոն հեկտարի։ Այդպիսով, հնգամյա պլանով նախատեսված ցուցանիշները թե կոլխոզների, թե սովխոզների գծով արդեն գերակատարվել էին։

Այս խոշոր նվաճումները վկայում էին, որ այսուհետև ապրանքային հացի հիմնական մատակարարողները հանդիսանում են սովխոզներն ու կոլխոզները, որ հանձին գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի, սովետական պետությունն ունի իր կայուն հենարանը։ Հետևապես, այժմվանից սովետական իշխանության իսկական և ամուր հենարանը գյուղում դառնում է կոլխոզային գյուղացիությունը։

Այս բոլորի շնորհիվ փոխվել էր դասակարգային ուժերի հարաբերությունը երկրի էկոնոմիկայի մեջ՝ հօգուտ սոցիալիզմի։

16-րդ համագումարին նախորդող ժամանակաշրջանում սոցիալիստական շինարարության բոլոր ճակատներում ձեռք բերված պատմական հաղթանակները արդյունք էին պարտիայի գլխավոր գծի հետևողական կենսագործմանը։ Բնութագրելով պարտիայի հիմնական գիծը 15—16-րդ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում, ընկեր Ստալինը ասում էր. «Պարտիայի հիմնական դիրքորոշումը տվյալ մոմենտում այն է, որ տնտեսական ճակատի առանձին տեղամասերում սոցիալիզմի հարձակումից անցնենք ամբողջ ճակատով հարձակման և՛ արդյունաբերության բնագավառում, և՛ գյուղատնտեսության բնագավառում»։[2]

Կապիտալիստական էլեմենտների դեմ ընդհանուր հարձակումը պարտիան նախապատրաստել էր մեր երկրի զարգացման նախորդ էտապներում, ինդուստրացման և գյուղի կոլեկտիվացման միջոցով. «Ի տարբերություն անցած էտապներից,— ասում էր ընկեր Ստալինը,— 16-րդ համագումարին նախորդող ժամանակաշրջանը ամբողջ ճակատով սոցիալիզմի ընդհանուր հարձակման անցնելու ժամանակաշրջան է, սոցիալիզմի ուժգին կառուցման ժամանակաշրջանը՝ թե արդյունաբերության բնագավառում, թե գյուղատնտեսության բնագավառում»։[3]

Այս նշանակում էր, որ սոցիալիզմը հաղթանակում էր ոչ միայն քաղաքում, այլև գյուղում։ ՍՍՌՄ-ը, այդպիսով, թևակոխում է սոցիալիզմի շրջանը։ «Պարզ է, որ մենք արդեն թևակոխել ենք սոցիալիզմի ժամանակաշրջա-

---

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 298։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 384։
[3] Նույն տեղում, էջ 384—385։

նը,— ասում է ընկեր Ստալինը Պարտիայի 16-րդ համագումարում իր եզրափակման խոսքում,— որովհետև սոցիալիստական սեկտորն այժմ իր ձեռքում պահած ունի ժողովրդական տնտեսության տնտեսական բոլոր լծակները»։[1]

Ստալինյան հնգամյակի առաջին տարվա հանրագումարները ցույց տվին, որ պլանային առաջադրանքները բոլոր գլխավոր գծերով գերակատարված են։ Այս հանգամանքը մասսաների ընդերքում ծնել էր հնգամյակը չորս տարում կատարելու լոզունգը։ Հաշվի առնելով բանվորների և կոլխոզնիկների լայն խավերի խանդավառ էնտուզիազմը այդ գործում, պարտիայի 16-րդ համագումարը իր որոշումներում մատնանշեց, որ շարունակելով բոլշևիկյան մարտական տեմպերը սոցիալիստական շինարարության բնագավառում, պետք է հասնել այն բանին, որ հնգամյակը կատարվի չորս տարում։ Արդյունաբերության մի շարք առաջավոր ճյուղերում հնգամյա պլանի կատարումն այնքան հաջող էր ընթանում, որ այդ ճյուղերում հնգամյակի ծրագիրը կարելի է կատարել նույնիսկ երկու և կես—երեք տարում։

Հնգամյակի առաջին երկու տարիների ժամանակաշրջանում արագ տեմպերով զարգանում էր ծանր ինդուստրիան։ Մանավանդ մեքենաշինության բնագավառում մենք առաջ էինք գնում վիթխարի տեմպերով։ Կապիտալիստական ոչ մի առաջավոր երկրի հայտնի չէին այնպիսի տեմպեր, ինչպիսին գոյություն ուներ մեր երկրում։ 1930 թվականին գործարկվեցին մի շարք գիգանտ նորակառույցներ։ Դրանց թվում էր Ստալինգրադի տրակտորային հսկան, որի նմանը չկար ամբողջ աշխարհում։ Այդ խոշորագույն հաղթանակի առթիվ ընկեր Ստալինը ողջունեց գործարանի բանվորներին և ղեկավարներին։ Իր ողջույնի հեռագրում ընկեր Ստալինը ասում էր.

«Այն 50 հազար տրակտորները, որ դուք պետք է ամեն տարի տաք երկրին, 50 հազար արկեր են, որոնք պայթեցնում են բուրժուական հին աշխարհը և ճանապարհ են հարթում գյուղում նոր, սոցիալիստական կացութաձևի համար»։[2]

Երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում սովետական ժողովրդի ձեռք բերած պատմական նվաճումները և սոցիալիստական շինարարության առաջընթացը կատարվում էր դասակարգային լարված պայքարի պայմաններում, բազմաթիվ դժվարությունների հաղթահարման ճանապարհով։

«Այդպիսի նվաճումներն ինքնահոսի կարգով չեն տրվում,— ասում է ընկեր Ստալինը։ Այդ նվաճումներն իրականում մենք ձեռք ենք բերել վճռական պայքարով ընդդեմ դժվարությունների, լուրջ ու տևական պայքարով դժվարությունները հաղթահարելու համար»։[3]

Ինչ վերաբերում է այդ դժվարությունների բնույթին, ապա այն արմատապես տարբերվում է կապիտալիստական սիստեմի դժվարությունների բնույթից։ Մեր դժվարությունները «ոչ թե անկման դժվարություններ կամ լճացման դժվարություններ են, այլ անման դժվարություններ, վերելքի դժվարություններ, առաջշարժման դժվարություններ»։[4]

---

[1] Ի. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 639, 10-րդ հրատարակություն։
[2] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 263։
[3] Նույն տեղում, էջ 338։
[4] Նույն տեղում, էջ 341։

Սոցիալիստական շինարարության հետագա առաջընթացը, գյուղատնտեսական մթերքների և արդյունաբերական ապրանքների պահանջի վիթխարի աճը հարց էին դնում մեծապես ավելացնել արտադրանքի թողարկումը, իսկ այդ կատարել հնարավոր էր, թե արդյունաբերությունը և թե գյուղատնտեսությունը ժամանակակից սարքավորումով զինելու միջոցով։ «Առանց ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերի վերակառուցման,— անհնար էր բավարարել երկրի և նրա ժողովրդական տնտեսության նոր, ավելի ու ավելի աճող պահանջները»։[1] Առանց վերակառուցման նույնպես հնարավոր չէր մինչև վերջը հասցնել սոցիալիզմի հարձակումն ամբողջ ճակատով, որովհետև հարկավոր էր քաղաքի և գյուղի կապիտալիստական տարրերին հարվածել ու նրանց ոչնչացնել ոչ միայն աշխատանքի ու սեփականության նոր կազմակերպմամբ, այլև նոր տեխնիկայով. իր տեխնիկայի գերազանցությամբ։[2]

Եթե արդյունաբերության զարգացման տեմպերով մենք գերազանցում էինք առաջավոր կապիտալիստական երկրներին, ապա այդ չէր կարելի ասել արդյունաբերության զարգացման մակարդակի տեսակետից, որի բնագավառում մենք դեռևս զգալի չափով ետ էինք մնում։ Ժողովրդական տնտեսության հարաճուն զարգացման պահանջները, երկրի պաշտպանունակության ամրացման անհրաժեշտությունը և սոցիալիզմի կառուցման կենսական շահերը թելադրում էին ամենակարճ պատմական ժամանակամիջոցում վերացնել մեր հետամնացությունը արդյունաբերության արտադրանքի թողարկման տեսակետից, հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական երկրներին նաև այդ բնագավառում։ Դրան հասնելու համար խնդիր էր դրվում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը զինել նոր, առաջավոր տեխնիկայով, հին սարքավորումը փոխարինել նոր սարքավորումով, նոր տեխնիկայով։ «Վերակառուցման ժամանակաշրջանում տեխնիկան է վճռում ամեն ինչ»,[3]— ասում էր ընկեր Ստալինը։

Ընկեր Ստալինը ասում էր, որ մեր երկրի հետագա վերելքը պայմանավորված է նոր, առաջավոր տեխնիկայով, առանց դրան «մենք ռիսկ ենք անում մեր հայրենիքը դատապարտելու հետամնացության, գորշ կյանքի... Կասեցնել տեմպերը— այդ նշանակում է հետ մնալ, իսկ հետամնացներին հարածում են»։[4]

«Առաջավոր երկրներից մենք ետ ենք մնացել 50—100 տարով։ Այդ տարածությունը մենք պետք է վազելով անցնենք 10 տարում։ Կամ մենք այդ կանենք, կամ մեզ կճզմեն»,[5]— ասում էր ընկեր Ստալինը։ Ուստի անհրաժեշտ է, որ բոլշևիկ տնտեսվարները իրենց ձեռքը վերցնեն արտադրության ամբողջ ղեկավարությունը, իրենց հեռու չպահեն այդ գործից, այն թողնելով «մասնագետներին»։ Վերջապես անհրաժեշտ էր պատրաստել բանվոր դասակարգից, աշխատավորներից նոր կադրեր, արտադրության նոր հրամանատարներ։ Այդ բոլորը վերակառուցման շրջանում կարևոր ու կենսական խնդիրներ էին, որոնց լուծման համար պարտիան ու կառավարությունը հսկայական աշխատանք ծավալեցին։

---

[1] Համկ(բ)Կ Պատմություն, համառոտ դասընթաց, էջ 428։
[2] Նույն տեղում, էջ 429։
[3] Նույն տեղում, էջ 430։
[4] Նույն տեղում, էջ 429—430։
[5] Նույն տեղում, էջ 430։

1930 թվի սեպտեմբերի 3-ին հրապարակվեց ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի հայտնի դիմումը ուղղված պարտիական, տնտեսական, պրոֆեսիոնալ և կոմերիտական կազմակերպություններին՝ հնգամյակի երկրորդ տարվա արտադրական-ֆինանսական պլանները կատարելու և գերակատարելու ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին։

Հայաստանի բանվորները, ինժեներա-տեխնիկական աշխատողները, պարտիական ու կոմերիտական կազմակերպությունները Լենինի—Ստալինի պարտիայի գլխավոր շտաբի դիմումին պատասխանեցին շատ արդյունաբերական ձեռնարկությունների պլանների կատարումով և գերակատարումով։ Սոցիալիստական մրցումը ծավալվեց նոր թափով, ստվարացան հարվածային բանվորների շարքերը, բարձրացավ աշխատանքային կարգապահությունը։ Դիմումի քննության ժամանակ ամենուրեք ընդունվեցին կոնկրետ ու գործնական որոշումներ։ Ամենուրեք կազմակերպվում են հարվածային բրիգադաներ, որոնք ընդգրկում էին արտադրության տասնյակ հազարավոր առաջավորներ։

Կարի, Փայտամշակման առաջին և երկրորդ, Ջեթ-օճառ և այլ ձեռնարկություններ իրենց օրվա պլանները գերակատարում էին։ Տեքստիլ կոմբինատի օբեկտներում աշխատող 1600 կոմերիտական բանվորներ և ծառայողներ իրենց ամրացրին արտադրությանը մինչև հնգամյակի վերջը։ Ծխախոտի գործարանն իր պլանը սկսեց գերակատարել՝ 700 հազար գլանակի դիմաց տալով մեկ միլիոն գլանակ։

1930 թվի սեպտեմբերի 29-ին ՀԱՄՆ-ի նախագահությունը իր ընդլայնած նիստում քննեց ռեսպուբլիկայի արտադրական ձեռնարկությունների արտադրական-ֆինանսական պլանների կատարման ընթացքը։ Պարզվեց, որ մի շարք ձեռնարկություններ իրենց պլանները կատարել և գերակատարել են։ Որոշվեց կարմիր տախտակի արժանացնել իրենց արտադրական պլանները կատարող և գերակատարող Լենինականի տեքստիլ կոմբինատը, Ջորագեսը, Շամլուղի հանքերը, Փայտամշակման գործարանը, «Արարատ» գործարանը, Հայպոլիգրաֆը, Կարբիդի, Կաշվի և Հայկինոյի գործարանները։

Հարվածային շարժումը ընդգրկել էր մոտ 17 հազար բանվորներ։

Ստալինյան հնգամյակի երրորդ վճռական տարում՝ 1931 թվականին, սովետական երկրի էկոնոմիկայում տեղի ունեցան վիթխարի տեղաշարժեր։ Մեր երկրի բանվոր դասակարգը և աշխատավորները, բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ նոր համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթանակների հասան։ Նրանք ավարտեցին սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը։

1931 թվականին խոշոր հաղթանակներ ձեռք բերվեցին նաև Հայաստանում՝ թե երկրի ինդուստրացման և թե գյուղատնտեսության կոլեկտիվացման ուղղությամբ։

1931 թիվը արդյունաբերության բնագավառում «բնորոշվում է սոցիալիստական ինդուստրիայի բուռն աճմամբ,— ասված է ՀԿ(բ)Պ 8-րդ համագումարի որոշումներում,— արդյունաբերության նոր կենտրոնների ստեղծմամբ, բանվորական մասսաների արտադրական խանդավառության և ակտիվության հզոր վերելքով»։[1]

1931 թվի փետրվարի 14-ին գումարվեց Հայաստանի Սովետների 7-րդ

[1] ՀԿ(բ)Պ 8-րդ համագումարի բանաձևերը, էջ 5, Երևան, 1932 թ.։

համագումարը։ Համագումարը ամփոփեց Ստալինյան հնգամյակի առաջին երկու տարիների նվաճումները երկրի էկոնոմիկայի բոլոր բնագավառներում և կուլտուրական շինարարության ասպարեզում։ Համագումարի նախօրյակին հնգամյա պլանի առաջին երկու տարիների հիմնական առաջադրանքները կատարվել էին։ Ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքի մեջ խոշոր չափով աճել էր արդյունաբերության համախառն արտադրանքը։ Գերակատարվել էր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պլանային բոլոր ցուցանիշները։ Կատարվել էր նաև ժողովրդական տնտեսության մեջ նախատեսված կապիտալ ներդրումների պլանը։ Այս բոլորը հիմք էին տալիս համագումարին ընդունելու սոցիալիստական շինարարության ավելի բարձր՝ հնգամյակի երրորդ վճռական տարվա պահանջներին համապատասխան զարգացման առաջադրանքներ։ Համագումարը իր որոշումներում մատնանշում էր. «Սահմանել, որ հիմնական աշխատանքների 1931 թվի պլանի կատարման կենտրոնական խնդիրը պետք է լինի շինարարության մեջ մուծված միջոցների առավելագույն ակտիվացումը արագացնելով, ավարտելով և շահագործման մեջ մտցնելով կառուցվող օբեկտները»։[1]

Համագումարը սահմանեց 1931 թվին ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների, արդյունաբերության հանրայնացված հատվածի ընդհանուր արտադրանքի չափի և աշխատանքի արտադրողականության զգալի աճ։ Համագումարը որոշում ընդունեց աշխատավարձի բարձրացման, բնակարանային և կոմունալ շինարարության ծավալման, մատակարարման գործի էլ ավելի բարելավման և կուլտուրական շինարարության մասին։

1931 թվականի հունիսին տնտեսավարների խորհրդակցությունում ընկեր Ստալինը արտասանեց իր պատմական ճառը՝ նվիրված տնտեսական շինարարության խնդիրներին։ Իր այդ ճառում ընկեր Ստալինը առաջադրեց վեց կարևորագույն պայմաններ, որոնք վճռական նշանակություն ունեցան առաջին հնգամյա պլանի կատարման գործում։ Նրանք վիթխարի թափ հաղորդեցին տնտեսական աշխատանքներին, մոբիլիզացրին բանվորական լայն խավերին՝ պարտիայի ղեկավարությամբ նոր ձևով աշխատելու, արտադրությունը նոր ձևով ղեկավարելու համար։

Ընկեր Ստալինի վեց պայմանների կենսագործման նշանաբանով աշխատելով՝ Հայաստանի բոլշևիկները, բանվորները և արտադրության մասնագիտական անձնակազմը աննախընթաց հաջողությունների հասան ռեսպուբլիկայի արդյունաբերության և շինարարության պլանների կատարման գործում։ 1931 թիվը նշանավորվեց ռեսպուբլիկայի ինդուստրացման նոր վերելքով։

Արդյունաբերության մի շարք ձեռնարկությունների՝ Զորագէսի, Քանաքեռագէսի, Ցեմշինի և այլ օբեկտների կառուցումը և նրանցից շատերի ավարտումն ու գործարկումը առաջին հնգամյակի տարիներին, նպաստեցին սոցիալիստական ինդուստրիայի տեսակարար կշռի անշեղ բարձրացմանը ժողովրդական տնտեսության մեջ։

1931 թվականին ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքը նախորդ տարվա համեմատությամբ բարձրացավ 16,1 տոկոսով, իսկ արդյունաբերության արտադրանքը նույն ժամանակամիջոցում ա-

[1] Հայկական ՍՍՌ Գեն. Կենտր. արխիվ, ֆ. 112, գ. 814, թ. 2—34։

վելացավ 47,4 տոկոսով։ Արդյունաբերության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի մեջ՝ 1930 թվի 33,3 տոկոսից 1931 թվին բարձրացավ 42,4 տոկոսի։[1]

Էլեկտրաէներգիայի արտադրությունը 1931 թվին ավելացավ 24,4 տոկոսով, իսկ նրա սպառումը՝ ազգաբնակության յուրաքանչյուր շնչի հաշվով, 1930 թվի 39,6 կիլովատ ժամի փոխարեն՝ 1931 թվին բարձրացավ 47,3 կիլովատ ժամի։ Հնգամյակի երրորդ տարում ժողովրդական տնտեսության մեջ հիմնական ներդրումները կազմեցին 82 միլիոն ռուբլի, 1930 թվի համեմատությամբ տալով 55 տոկոսի աճ։[2]

Ռեսպուբլիկայի արդյունաբերության զարգացման զուգընթաց զգալի չափով ավելացավ արդյունաբերական բանվորների քանակը։ Համեմատած 1930 թվի հետ, 1931 թվին բանվորների քանակը արդյունաբերության մեջ աճեց 42 տոկոսով, շինարարության մեջ՝ 15,4 տոկոսով։ Աշխատավարձի տարեկան միջինը 1930 թվի համեմատությամբ 1931 թվին աճեց ցենզային արդյունաբերության մեջ 18,1 տոկոսով, ոչ ցենզային արդյունաբերության մեջ՝ 15,4 տոկոսով, շինարարության բնագավառում՝ 20,7 տոկոսով։[3]

1932 թիվը մտավ հնգամյակի պատմության մեջ որպես «չորրորդ ավարտական» տարի։ Սովետական Միության բանվոր դասակարգը, ինժեներատեխնիկական աշխատողների մեծաքանակ բանակը և կոլխոզային բազմամիլիոն գյուղացիությունը Լենինի—Ստալինի պարտիայի ղեկավարությամբ պայքարում էին հնգամյակը չորս տարում ավարտելու համար։ Արտադրական վիթխարի էնտուզիազմը համակել էր մասսաներին։ Սոցիալիստական մրցությունը և հարվածայնությունը նոր, հսկայական ծավալ էր ստացել։ Նա ընդգրկում էր յուրաքանչյուր գործարան, ցեխ, բրիգադա։ Արտադրության առաջավորների փորձը հիմք է հանդիսանում այդ շարժման հետագա զարգացման համար։ Առաջավորների փորձը հետզհետե մուտք է գործում արդյունաբերության բոլոր ճյուղերը, դառնալով աշխատանքի արիության և հերոսության հսկայական շարժում։

Հնգամյակի չորրորդ տարում մեկը մյուսին հաջորդելով գործարկվում էին հարյուրավոր ֆաբրիկաներ, գործարաններ, կոմբինատ-գիգանտներ, հիդրոէլեկտրակայաններ, հանքեր, ՄՏԿ-ներ՝ սարքավորված հայրենական առաջավոր տեխնիկայով։

1932 թ. հոկտեմբերի 10-ին ամբողջ երկիրը նշեց հնգամյակի նորակառույց գիգանտներից մեկի՝ խոշորագույն հիդրոէլեկտրակայանի՝ Դնեպրոգէսի թողարկումը։

Սոցիալիստական շինարարության հսկայական տեմպերը համակել էր նաև Հայաստանի աշխատավորներին։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը իր 1931 թ. հոկտեմբերի 31-ի հայտնի որոշման մեջ նշում էր, որ Անդրկովկասի բոլոր ռեսպուբլիկաներում նշանակալից հաջողություններ են ձեռք բերվել ինդուստրացման ասպարեզում, ինչպես նաև շինարարության թափի ու որակի բնագավառում։ Դրա հետ միասին, ՀամԿ(բ)Պ Կենտկոմը անհրաժեշտ համարեց հետագայում Անդրկովկասի ինդուստրացման գործում կենտրոնացնել ջանքերը նավթի, գունավոր մետաղ-

---

[1] ՀԿ(բ)Պ 8 րդ համագումարի բանաձևը, էջ 5։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, էջ 5—6։

ների, քարածուխի հանույթի կազմակերպման, բամբակագործության, մետաքսագործության հետագա լավացման և տեքստիլ արդյունաբերության ընդարձակման ուղղությամբ։ ՀամԿ(բ)Պ Կենտկոմը Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկներին ցուցում տվեց զարկ տալ գունավոր մետալուրգիայի և մանավանդ պղնձի, արդյունաբերության լայն զարգացմանը։ Այդ կարևոր խնդրի իրականացման համար պահանջվում էր անմիջապես ձեռնարկել Ղափանի, Ալավերդու պղնձահանքերի արմատական վերակառուցման և վերասարքավորման գործին։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմի այս պատմական որոշումները դրվեցին Հայաստանի ինդուստրացման հետագա վերելքի համար մղվող պայքարի հիմքում։ Ձեռք առնվեցին հատուկ միջոցառումներ, որոնք զգալի չափով բարձրացրին հանքի հանույթը և պղնձի ձուլումը։ Հետախուզական աշխատանքներ ծավալվեցին ինչպես գործող հանքերի պաշարների որոշման, այնպես էլ նոր հանքավայրերի հայտնաբերման ուղղությամբ։ Ռեկոնստրուկցիայի ենթարկվեցին արտադրության օբեկտները։ Ալավերդում կառուցվեց պղնձաձուլական նոր գործարան։

1932 թ. հոկտեմբերի 25-ին գործարկվեց Միության մեջ առաջինը հանդիսացող Երևանի ավտոմատ հիդրոկայանը։ Նույն թվի նոյեմբերին գործարկվեցին ռեսպուբլիկայի պարծանք, Ստալինյան հնգամյակի ծնունդ խոշոր հիդրոէլեկտրակայանի՝ Զորագէսի առաջին ագրեգատը և Լենինականի հիդրոկայանի երկրորդ ագրեգատը։ Հնգամյակի չորրորդ տարում գործարկվեցին արտադրական մի շարք այլ ձեռնարկություններ, որոնց թվում՝ Երևանի Կարի, Ֆերմենտացիոն, Պեմզաբլոկի, Լենինականի նոր գործվածքային գործարանները և ուրիշները։ Հնգամյակի նորակառույցների շարքումն էին ազոտային պարարտանյութերի հսկայական կոմբինատը, որը կարևոր նշանակություն ուներ Անդրկովկասի գյուղատնտեսության զարգացման համար, Դավալուի ցեմենտի գործարանը, Կիրովի անվան կոմբինատը և շատ ուրիշներ, որոնք գործող ձեռնարկությունների շարքն անցան հետագա տարիներին։ Միայն 1932 թվին Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ներդրված կապիտալ միջոցները կազմեցին ավելի քան 123 միլիոն ռուբլի։[1]

* * *

1931 թ. զգալի առաջընթաց կատարվեց ռեսպուբլիկայի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ։ Գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման բնագավառում 1930 թ. կեսերից Հայաստանում սկսված բեկումը 1931 թվականին ավելի խորացավ։ Կոլխոզային շարժումը մեծ ծավալ ընդունեց տեխնիկական կուլտուրաների մշակմամբ զբաղվող շրջաններում։ Շոշափելի քայլեր կատարվեցին գյուղատնտեսության մեքենայացման ուղղությամբ։ 1930—31 թ. թ. ընթացքում ստացվեցին մոտ 3 միլիոն ռուբլու արժողությամբ տրակտորներ, գյուղատնտեսական այլ մեքենաներ և գործիքներ։ 1931 թ. ընթացքում կազմակերպվեցին 6 նոր մեքենատրակտորային կայաններ, որի հետևանքով գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակը, մանավանդ բամբակացան շրջաններում զգալի չափով բարձրացավ։ Այդ հանգամանքը խոշոր նշանակություն ու-

[1] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 40/113, գ. 2701, թ. 20։

նեցավ հիշված շրջանների կոլեկտիվ շարժման նոր վերելքի համար։

1931 թ. հունիսի 1-ի տվյալներով Հայաստանում գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման միջինը հասնում էր 25 տոկոսի, 1930 թ. դեկտեմբերի 15-ին 11,4 տոկոսի դիմաց։ Բամբակագործական-այգեգործական չորս շրջանների կոլխոզներումն էր աշխատավորական տնտեսությունների 37,5 տոկոսը, իսկ անասնապահական-լեռնային 22 շրջաններում՝ 22,4 տոկոսը։[1]

Բամբակագործական շրջաններում տեղի ունեցող կոլխոզային շարժման վերելքի օրինակ կարող են հանդիսանալ Ղամարլուի (այժմ Արտաշատ) և Ղուրդուղուլու (այժմ Հոկտեմբերյան) շրջանները։ Ղամարլուի շրջանում քսան օրվա ընթացքում՝ օգոստոսի 5-ից մինչև 25-ը, կոլխոզներ ընդունվեցին ավելի քան 1200 աշխատավորական տնտեսություններ։ Մի քանի գյուղերում կազմակերպվեցին նոր կոլխոզներ։ Շրջանի կոլեկտիվացումը հասավ 43 տոկոսի։ Համատարած կոլեկտիվացված գյուղերի քանակը հասնում էր 15-ի։[2]

1931 թ. օգոստոսի 28-ի տվյալներով Ղուրդուղուլու շրջանում կոլեկտիվացված էր գյուղացիության մոտ 69 տոկոսը։ Համատարած կոլեկտիվացման ենթարկված գյուղերի քանակը հասնում էր 8-ի։ Օրինակ Արջարխ գյուղը բաղկացած էր 198 աշխատավորական տնտեսությունից, որից մինչև ապրիլի մեկը կոլխոզի մեջ էին 139-ը, իսկ դարնանացանի ընթացքում Արջարխ գյուղը ամբողջովին կոլեկտիվացման ենթարկվեց։ Գյուղին տրված 1931 թվի բամբակի 597 հեկտար պլանը կատարեց կոլխոզը։[3] Այսպիսի գյուղերի թիվը ռեսպուբլիկայում օրըստօրե շատանում էր։

Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն 1931 թ. օգոստոսի սկզբներին «Կոլեկտիվացման տեմպի մասին» ընդունած իր հայտնի որոշման մեջ բացատրում էր, որ «Այս կամ այն շրջանում կամ մարզում կոլեկտիվացումը հիմնականում ավարտված լինելու չափանիշը հանդիսանում է ոչ այն հանգամանքը, որ անպայման ընդգրկված լինի չքավոր, միջակ տնտեսությունների ամբողջ 100 տոկոսը, այլ այն, որ կոլխոզները ներգրավված լինեն գյուղացիական տնտեսությունների ոչ պակաս քան 60—80 տոկոսը և գյուղացիական ցանքի տարածությունների ոչ պակաս քան 65—80 տոկոսը»։[4]

Պարտիայի Կենտկոմի այս ցուցումի համաձայն 1931 թ. հոկտեմբերի 20-ի տվյալներով Ղուրդուղուլիի, Մեղրու և Ղամարլուի շրջանների կոլեկտիվացումը հիմնականում ավարտվել էր։ Կոլխոզների մեջ էր Ղուրդուղուլիի շրջանի աշխատավոր գյուղացիների 79,6 տոկոսը, Մեղրու շրջանի՝ 69,6 տոկոսը, իսկ Ղամարլուի՝ 62,8 տոկոսը։ Մի շարք շրջաններ, այդ թվում Գորիսը, Ղափանը, Վաղարշապատը (այժմ Էջմիածին), Իջևանը և Աշտարակը գտնվում էին համատարածի նախօրյակին։ Նույն տվյալների համաձայն, այդ շրջանների կոլեկտիվացման միջին մակարդակը տատանվում էր 41,6 և 52 տոկոսի միջև։[5] Ետ էին մնում Թալինի շրջանը, որ կոլեկտիվացման էր ենթարկված տնտեսությունների միայն 14,2 տոկոսը, Դարալագյազը (այժմ Մի-

---

1 ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, գ. 744, էջ 294—295։

2 «Մահկալ», № 102, 1931 թ.։

3 Նույն տեղում, 1931 թ. ապրիլ։

4 «Խորհրդային Հայաստան», 180, 1931 թ.։

կոյանի և Ազիզբեկովի շրջաններ) 19,7 տոկոսը, Ալավերդին՝ 21,2 տոկոսը և այլն։[1]

Այսպիսով, գյուղացիական աշխատավորական տնտեսությունների կոլեկտիվացման, հետևապես նաև ցանքային տարածությունների համայնացման բնագավառում տեղի ունեցող վերելքը 1931 թ. զգալի թափ էր ստացել։ Ջնայած այդ նվաճումներին, այնուհանդերձ գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման մակարդակը ռեսպուբլիկայում ցածր էր։ Այսպես, ՍՍՌՄ-ի ՀԺԿ-ի տվյալներով 1931 թ. մարտի 1-ին Սովետական Միության մեջ կոլխոզներն ընդգրկում էին 8.830 հազար աշխատավորական տնտեսություններ, որը կազմում էր բոլոր տնտեսությունների 35,3 տոկոսը։[2] Տարվա վերջին կոլեկտիվացման մակարդակը 60 տոկոսից անցնում էր։ Ինչ վերաբերում է Անդրֆեդերացիայի գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման միջին մակարդակին, ապա այստեղ 1931 թ. հուլիսի 1-ի տվյալներով կոլեկտիվացումը հասնում էր 36,3 տոկոսի։ Այդ թվում Ադրբեջանական ՍՍՌ-ում կոլեկտիվացված էր 40,3 տոկոսը, Վրացական ՍՍՌ-ում՝ 37,4 տոկոսը, իսկ Հայկական ՍՍՌ-ում՝ 27 տոկոսը։ Նույն պատկերն էր բամբակագործական և այլ տեխնիկական կուլտուրաների մշակումով զբաղվող շրջաններում, որտեղ կոլեկտիվացումը այդ ժամանակ Հայաստանում կազմում էր 40,6 տոկոսը, Ադրբեջանում՝ 54,0, իսկ Վրաստանում՝ 51,2 տոկոս։[3]

1931 թ. վերջին Անդրկովկասի գյուղացիության կոլեկտիվացումը միջին հաշվով կազմում էր 38,4 տոկոս։ Վերևում բերված թվերը ցույց են տալիս, որ Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում ձեռք բերված աննախընթաց հաջողությունների հետ միասին, մենք այնուամենայնիվ հետ էինք մնում կոլեկտիվացման ընդհանուր միութենական միջին մակարդակից։ Այդ հետամնացությունը հետևանք էր դեռևս 1930 թ. սկզբներին գյուղացիության հարցում, մասնավորապես կոլխոզշարժման բնագավառում թույլ տրված կոպիտ քաղաքական սխալների, որոնք վճռականորեն մինչև վերջ դեռևս չէին վերացվել։ Քիչ չէին նաև «ձախ» պրակտիկայի դեպքերը, որի դեմ մղվող պայքարը շարունակվում էր։ Վերջապես՝ այն հետևանք էր դասակարգային թշնամու գործակալների դեմ մղվող անբավարար պայքարի, թշնամի տարրեր, որոնք թափանցել էին առանձին կոլխոզներում և քայքայիչ աշխատանք էին տանում։ Զգալի թվով կոլխոզներ դեռևս կազմակերպչորեն չէին ամրացել։

Գյուղացիության հարցում ընդհանրապես, կոլխոզային շինարարության բնագավառում առանձնապես գոյություն ունեցող ծռումներն ու սխալները վերացնելու գործում խոշոր նշանակություն ունեցավ, ինչպես հիշատակել ենք վերևում, Համկ(բ)Պ Կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի որոշումը։

Համկ(բ)Պ Կենտկոմը արձանագրեց, որ «... Անդրերկրամի և ազգային կոմպարտիաների կենտկոմների աշխատանքների մեջ թույլ են տրված լուրջ քաղաքական սխալներ, որոնցից հիմնականը հանդիսանում է գյուղացիական հարցում կատարած սխալը»։[4]

---

[1] «Մաճկալ», № 124, 1931 թ.։

[2] В. Молотов. В борьбе за социализм, речи и статьи, стр. 164.

[3] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, դ. 876, թ. 45։

[4] «Սորհրդային Հայաստան», 4 նոյեմբերի, 1931 թ.։

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը առանձնապես մատնանշեց, որ գյուղացիության հիմնական մասսաները շրջադարձ են կատարել դեպի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը և պարտավորեցրեց Անդրկովկասի պարտիական կազմակերպություններին՝ անմիջապես ձեռնամուխ լինել թույլ տրված սխալները մինչև վերջ ուղղելու աշխատանքին և բոլոր ջանքերը կենտրոնացնել՝ կոլխոզների կազմակերպչական, տնտեսական ու քաղաքական ամրացման վրա, հաշվի առնելով յուրաքանչյուր շրջանի առանձնահատկությունները։[1]

Կենտկոմը ցուցում տվեց վճռական վերակառուցման ենթարկել ջրային տնտեսության վիճակը, զարկ տալ անասնաբուծական սովխոզներին և կոլխոզային ապբանքային ֆերմաներին։[2]

Անդրկովկասյան պարտիական կազմակերպությունների 7-րդ համագումարում, խոսելով գյուղում թույլ տրված սխալների մասին, ընկ. Բերիան իր զեկուցման մեջ ընդգծում է, որ գյուղացիական հարցում տեղի ունեցած սխալները պատահական չեն։ Դրանց պատճառն այն էր, որ պարտիական կազմակերպությունները բավականաչափ կապված չէին գյուղացիական մասսաների հետ, որ «նրանք, ինչպես մատնանշեց ընկեր Ստալինը, կտրված էին անպարտիական գյուղացիության տրամադրություններից, խոհերից և տենչերից»։[3]

Շնորհիվ ՀամԿ(բ)Պ Կենտկոմի անմիջական միջամտության և անձամբ ընկեր Ստալինի ամենօրյա ղեկավարության ու օգնության, Անդրկովկասի պարտիական կազմակերպությունները ընկ. Բերիայի գլխավորությամբ ձեռնամուխ եղան կոլեկտիվացման բնագավառում թույլ տրված սխալներն ուղղելու աշխատանքին։

Սովխոզների և կոլխոզների ծավալուն շինարարության հիման վրա հաջողությամբ լուծելով հացահատիկի պրոբլեմը, վճռական նվաճումների հասնելով տեխնիկական կուլտուրաների զարգացման ասպարեզում, պարտիան և կառավարությունը ձեռնամուխ եղան գյուղատնտեսության մյուս կարևոր բնագավառի՝ անասնաբուծության պրոբլեմի լուծման հարցին։ Գյուղատնտեսության բոլոր ճյուղերի մեջ անասնապահությունը այդ տարիներին ամենահետամնաց ճյուղն էր։ 1930—1931 թ. թ. դասակարգային թշնամին մեծ վնաս էր հասցրել այդ ճակատում։

Պարտիայի 16-րդ համագումարում ընկեր Ստալինն իր զեկուցման մեջ նշեց, որ մենք տագնապալի ցուցանիշներ ունենք անասնաբուծության ասպարեզում։ Չնայած այն բանին, որ դեռևս 1927 թ. անասնաբուծության բոլոր ճյուղերում, բացառությամբ ձիաբուծությունից, մենք գերազանցել էինք 1916 թվի մակարդակը, բայց 1930 թվին ունեցանք բացահայտ կրճատում։ Դրությունն ավելի անմխիթարական էր անասնաբուծության ապրանքային ելույթի տեսակետից, մինչդեռ սննդամթերքների արագորեն աճող պահանջները, հումքի կարիքը թե՛ արդյունաբերության կենտրոններում և թե՛ գյուղում, խիստ հրա-

---

[1] «Խորհրդային Հայաստան», 4 նոյեմբերի, 1931 թ.։

[2] Նույն տեղում։

[3] Լ. Բերիա, ՀամԿ(բ)Պ Անդրկովկասի երկրային կոմիտեի հաշվետվությունը 7-րդ համագումարում, էջ 11—12, Երևան, 1934 թ.։

մայական էին դարձնում անասնաբուծության արագ վերականգնումը և նրա զարգացման համար ուժեղ տեմպերի ապահովումը։

Հացահատիկային պրոբլեմից անմիջապես հետո,— մատնանշում է ընկեր Ստալինը,— որ հիմնականում արդեն մենք լուծում ենք հաջողությամբ, մեր առաջ ծառանում է մսի պրոբլեմը, որի սրությունն արտահայտվում է այժմ իսկ և որն սպասում է իր լուծմանը»։[1]

Ելնելով ընկեր Ստալինի այդ դրույթից, Պարտիայի 16-րդ համագումարը որոշեց արագ տեմպերով վերականգնել և զարգացնել անասնաբուծությունը։ Համագումարն իր որոշումներում նշեց մասնավորապես, որ անասնաբուծության վերականգնման ու զարգացման համար անհրաժեշտ է առաջին հերթին զարկ տալ անասնապահական սովխոզների և կոլխոզների բարձր ապրանքային ֆերմաների շինարարությանը, լայնացնելով կերի բազան։[2]

Ընկեր Ստալինի ցուցումների, ինչպես և համագումարի որոշումների կատարման ուղղությամբ խոշոր աշխատանք ծավալվեց։ 1930 թվից սկսած որոշ աշխատանք կատարվեց նաև Հայաստանում. կազմակերպվեցին մի շարք անասնաբուծական սովխոզներ և բազմաթիվ կոլխոզային ֆերմաներ։ Կենդանաբուծության զարգացման գործում մեծ նշանակություն ունեցավ նաև ՀամԿ(բ)Պ Կենտկոմի և ՍՍՌՄ Ժողկոմսովետի 1931 թ. օգոստոսի 3-ի դիմումը նվիրված անասնաբուծության զարգացման հարցերին։ «ՀամԿ(բ)Պ Կենտկոմը և ՍՍՌՄ-ի Ժողկոմսովետը գտնում են,— ասված է այդ դիմումի մեջ,— որ գյուղատնտեսության ասպարեզում մոտակա ժամանակում մեր կենտրոնական խնդիրն է անասնաբուծության սոցիալիստական հատվածը— սովխոզներ և կոլտնտեսական ապրանքային ֆերմաներ ստեղծելու և ամրացնելու աշխատանքը։ 1931 և 1932 թվականներն անասնաբուծության ծավալման ասպարեզում պետք է լինեն նույնպիսի վճռական բեկման տարիներ, ինչպիսին էին 1929—1930 թ. թ. սոցիալիստական հացահատիկային տնտեսության կազմակերպման բնագավառում»։[3]

Այդ դիմումը պարտիական, սովետական և կոլխոզային կազմակերպությունների ուշադրությունը առանձնապես բևեռում էր այն բանի վրա, որ կոլխոզային ապրանքային ֆերմաները տվյալ էտապում ամենահամապատասխան ձևերն են, որոնք սովխոզների հետ միասին ամենից արագ կլուծեն խոշոր ապրանքային անասնաբուծություն ստեղծելու խնդիրը։ «Կոլտնտեսական ֆերմաները հանդիսանալով կոլտնտեսության ամենաշահավետ գյուղատնտեսական ճյուղը, զարգանալով կոլտնտեսականների անհատական սպառողական անասնաբուծության տնտեսության և կոլտնտեսությունների հանրայնացված հոտերի հետ միասին հետագայում, անտարակույս, դառնալու են պետության համար կարևորագույն անասնաբուծական մթերք արտադրողներ»։[4]

Պարտիայի և կառավարության այս դիրեկտիվների կենսագործման նպատակով 1931 թ. օգոստոսի 19-ին գումարված Սևանի ավազանի (Բայազետ, Ախտա, Բասարգեչար և Մարտունի) շրջանների և օգոստոսի 26-ին հյուսիսային և հյուսիս-արևմտյան Հայաստանի (Ստեփանավան, Լենինական, Աղբաբա, Շամշադին և այլն) 11 շրջանների անասնապահական ֆերմաների

[1] Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 311։
[2] ВКП(б) в резолюциях, часть II, стр. 429.
[3] «Խորհրդային Հայաստան», № 178, 1931 թ.։
[4] Նույն տեղում։

հարվածային կոլխոզնիկների միջշրջանային համագումարները քննեցին Հայաստանի անասնաբուծության զարգացման խնդիրները և հիշված դիմումի կենսագործման ուղիները։ Համագումարներն առանձին-առանձին մշակեցին կոնկրետ միջոցառումներ, ինչպես ֆերմաների շինարարության, այնպես էլ նրանց տիպերի ու անասունների գլխաքանակի ավելացման խնդիրների մասին, յուրաքանչյուր ռայոնին տալով կոնկրետ հանձնարարություններ։ Միջշրջանային համագումարները հանդես եկան բոլոր կոլխոզնիկներին և մենատնտեսներին ուղղված դիմումներով, որտեղ նշվում էր 1931—32 թ. թ. ռեսպուբլիկայում կատարվելիք աշխատանքը՝ գյուղի սոցիալիստական անասնաբուծության զարգացման, ինչպես նաև կոլխոզային շինարարությունը ծավալելու ուղղությամբ։ Հարվածային անասնապահ կոլխոզնիկները իրենց դիմումներում գրում էին, որ պարտիայի և կառավարության դիրեկտիվների կենսագործումը և իրենց համագումարներում ընդունված պարտավորությունների իրականացումը հնարավոր է դասակարգային թշնամու՝ կուլակի և նրա գործակալների դեմ ծավալուն և անողոք պայքարի միջոցով։[1]

Պարտիայի և կառավարության վերոհիշյալ դիմումը մեծապես օգնեց ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպություններին ու կոլխոզնիկներին՝ անասնաբուծության զարգացման գործը առաջ մղելու համար։ Միայն 1931 թվի ընթացքում կազմակերպվեցին 120 կոլխոզային կաթնա-ապրանքային, 107 ոչխարաբուծական և 42 խոզաբուծական ֆերմաներ։ 1932 թվականին կաթնա-ապրանքային ֆերմաների թիվը հասավ 233-ի, հոտի գլխաքանակը 29,4 հազարի, ոչխարաբուծական ֆերմաների քանակը 119-ի, իսկ ֆերմաներում եղած ոչխարների գլխաքանակը՝ 74,6 հազարի։[2]

Հայաստանի Կոմպարտիայի 8-րդ համագումարը նշեց, որ մի շարք նվաճումներ են ձեռք բերվել նաև սովխոզների գծով։ «Անցյալ տարի խորհտնտեսություններում,— ասված է համագումարի որոշման մեջ,— խոշոր եղջերավոր անասունների թիվը 3,8 հազար գլխից հասավ 16,7 հազար գլխի, իսկ մանր եղջերավոր անասունների թիվը կրկնապատկվեց ավելի քան երկու անգամ»։[3]

Ռեսպուբլիկայի սովխոզների և կոլխոզների աշխատանքի հիմքում դրվեց ստալինյան այն դրույթը, որ 1931 թվականին պետք է ամուր հիմք գցել անասնաբուծության սոցիալիստական հատվածի հետագա զարգացման համար, որպես գյուղատնտեսության արտադրության առաջատար դեռ թույլ հանրայնացված այդ ճյուղում հաղթանակի իրոք կազմակերպված, մեքենայացված, գիտության վերջին նվաճումների վրա հիմնված խոշոր սոցիալիստական տնտեսությունը։

Աշխատանքի կազմակերպումը կոլխոզներում միշտ դրված է եղել պարտիայի և կառավարության ուշադրության կենտրոնում, որովհետև այն անխզելիորեն կապված է կոլխոզների տնտեսական-կազմակերպական ամրապնդման հարցերի հետ։

ՍՍՌՄ Սովետների 6-րդ համագումարը իր որոշումներում նշել է, որ աշխատանքի կազմակերպումը և եկամտի բաշխումը կոլխոզներում՝ ըստ կոլ-

---

[1] «Խորհրդային Հայաստան», 1931 թ., № 178։

[2] «Խորհրդային Հայաստան», № 199, 1931 թ.։

[3] ՀԿ(բ)Կ 8-րդ համագումարի բանաձևը, էջ 6, Կեսարիա, 1932 թ.։

խոզնիկի ծախսած աշխատանքի քանակի և նրա որակի, հանդիսանում են կոլխոզների ամրացման և նրանց աճի անհրաժեշտ նախապայմանը։ Համագումարը ցուցում տվեց իսպառ վերացնել դիմազրկության ու եկամուտների բաշխման գործում եղած հավասարեցման վնասակար երևույթները կոլխոզներում, արմատավորել գործավարձը և ամրապնդել աշխատանքը։[1]

Գյուղատնտեսության կոլեկտիվ-արտելային տնտեսության ձևի պայմաններում արտադրական բրիգադն արտադրության գլխավոր միավորն է, որի ամրացման խնդիրը ամենայն սրությամբ արտացոլվեց ՀամԿ(բ)Պ Կենտկոմի՝ 1932 թ. փետրվարի 4-ի «Կոլխոզների կազմակերպչական տնտեսական ամրացման հերթական միջոցառումների մասին» հայտնի որոշման մեջ, որտեղ ասված է, որ «աշխատանքի կազմակերպման կարևորագույն օղակը կոլխոզներում պետք է դառնա բրիգադան»։[2]

Հենվելով գյուղատնտեսական լավագույն արտելների փորձի վրա, Պարտիայի Կենտկոմը «նպատակահարմար է համարում,— կարդում ենք հիշված որոշման մեջ,—կոլխոզային բրիգադաներ կազմակերպել կոլխոզնիկների մշտական կազմով, այնպես, որպեսզի իբրև կանոն այդպիսի բրիգադաները կատարեն բոլոր հիմնական գյուղատնտեսական աշխատանքները ամբողջ տարվա ընթացքում, որոշ հողամասերում»։[3]

Այնուհետև որոշման մեջ նշվում է, որ բրիգադիրների ընտրությունը և բրիգադաների կազմի հոսունության վերացումը, բրիգադիրներին ցույց տրվող ամենօրյա օգնությունն ու նրանց որակավորումը պետք է դառնան պարտիական կազմակերպությունների գլխավոր խնդիրները։ Այս գրույթները հետագայում մտան կոլխոզային կյանքի հիմնական օրենքի՝ արտելի ստալինյան կանոնադրության մեջ։

Այսպիսով, կոլխոզային մասսայական շարժման առաջին իսկ տարիներին հիմնավորվեց և ամրացվեց բրիգադաների դերը սոցիալիստական գյուղատնտեսության մեջ, բարձրացվեց բրիգադիրների պատասխանատվությունը արտադրության կազմակերպման ու ղեկավարման գործում։

Դասակարգային թշնամին փորձում էր թուլացնել արտադրական այդ կարևոր միավորը, աշխատանքի կազմակերպումը կոլխոզներում։ Պարտիայի և կառավարության որոշումները մոբիլիզացրին պարտիական կազմակերպություններին և կոլխոզային մասսաներին՝ աշխատանքը ճիշտ կազմակերպելու, բրիգադան ամրացնելու, կոլխոզային եկամուտը ճիշտ բաշխելու համար մղվող պայքարում։

Հնգամյակի չորրորդ ավարտական տարում զգալի չափով ուժեղացավ ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեքենայական բազան. կազմակերպվեցին երեք նոր մեքենա-տրակտորային կայաններ, ՄՏԿ-ների մեքենայական պարկը ավելացավ 128 նոր տրակտորով և այլ բարդ գյուղատնտեսական մեքենաներով։ 1932 թվին Հայաստանի դաշտերում աշխատում էին 540 տրակտոր, 105 բարդ կալսիչ մեքենա և բազմաթիվ գյուղատնտեսական ուրիշ մեքենաներ։[4]

---

[1] „Стенографический отчет 6-го съезда Советов СССР", резолюция по отчету правительства.

[2] «Խորհրդային Հայաստան», № 34, 1932 թ.։

[3] Նույն տեղում։

[4] „Социалистическое строительство Арм. ССР (1920—1940 г.г.), стр. 59.

ՄՏԿ-ների կողմից սպասարկվող կոլխոզների թիվը նախորդ տարվա համեմատությամբ 1932 թվին ավելացավ 117-ով, իսկ մշակվող ցանքային տարածությունը 1931 թ. 28,9 հազար հեկտարից 1932 թ. հասավ 51,7 հազար հեկտարի, որը կազմում էր կոլխոզների ամբողջ ցանքերի 36,4 տոկոսը։[1]

1932 թ. հուլիսի 1-ի տվյալներով կոլխոզների թիվը ռեսպուբլիկայում հասնում էր 892-ի, որոնք ընդգրկում էին 63,1 հազար տնտեսություն՝ Հայաստանի աշխատավոր գյուղացիական տնտեսությունների 37,9 տոկոսը։[2]

Այս մի քանի տվյալները բավական են ցույց տալու համար այն նվաճումները, որոնք ձեռք էին բերվել գյուղատնտեսության վերակառուցման, նրա մեքենայական բազան ուժեղացնելու ասպարեզում։ Դրանք խոսում են գյուղատնտեսության վերակառուցման հնգամյա պլանի իրականացման խոշոր արդյունքների մասին։

Երկրի տնտեսական վերելքը և ծաղկումը առաջին հնգամյակի տարիներին, ինչպես և հետագայում, հետևանք էին բոլշևիկների պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության իրականացման։ Սովետական իշխանության գոյության տարիներին, մանավանդ հնգամյակների իրականացման շնորհիվ, փոխվեց ամբողջ Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի դեմքը։ Երկիրը ծածկվեց ինդուստրիայի նոր, առաջավոր օջախների ցանցով։ Անդրկովկասը նահապետական հողագործության երկրից դարձավ առաջավոր, գյուղատնտեսական մեքենաներով՝ տրակտորներով ու ագրոտեխնիկայով հագեցված երկիր։

Այդ նվաճումները ձեռք բերվեցին ՀամԿ(բ)Պ Կենտկոմի 1931 թվի հոկտեմբերի 31-ի որոշման և ընկեր Ստալինի ցուցումների կենսագործման շնորհիվ։ Այդ գործում չափազանց մեծ է ընկեր Լ. Պ. Բերիայի դերը, որը 1932 թվից սկսեց աշխատել ՀամԿ(բ)Պ Անդրերկոմի առաջին քարտուղարի պաշտոնում։ Ընկ. Բերիայի գլխավորությամբ Անդրկովկասի բոլշևիկները կազմակերպեցին ու գլխավորեցին բանվորների և կոլխոզնիկների աշխատանքային խանդավառությունը առաջին հնգամյակի կատարման ու գերակատարման գործում։

Սոցիալիզմի հարձակումը ընդհանուր ճակատով և մեր նվաճումները հանդիպում էին թշնամու կատաղի դիմադրությանը, թշնամու, որն արդեն փոխել էր իր պայքարի մեթոդներն ու տակտիկան։

Օգտվելով սրված դասակարգային պայքարից, կոնտրռևոլուցիոն ընդհատակյա կազմակերպությունները վնասարարական և դիվերսիոն աշխատանք էին կատարում։ 1930—1932 թ. թ. հայտնաբերվեցին ու ջախջախվեցին այսպես կոչված «արդյունաբերական պարտիան», «աշխատավորական գյուղացիական պարտիան» և ուրիշ կոնտրռևոլուցիոն բանդաներ, որոնք կատարում էին իմպերիալիստական պետությունների հանձնարարությունները։ Օտարերկրյա հետախուզությունների հանձնարարությամբ նրանք փորձում էին արգելակել մեր առաջխաղացումը, թուլացնել երկրի հզորությունը և նպատակել ինտերվենտների պլանների իրականացմանը։

1930—1933 թ. թ. հայտնաբերվեցին ու ջախջախվեցին բուխարինականների և տրոցկիստների մի քանի կոնտրռևոլուցիոն խմբակներ, որոնք, ինչպես

[1] „Социалистическое строительство Арм. ССР (1920—1940 г.), стр. 57.
[2] Նույն տեղում, էջ 51։

հետագայում ավելի պարզ դարձավ, գործում էին մյուս բոլոր բուրժուական-կուլակային դիվերսիոն ընդհատակյա կազմակերպությունների հետ միասին։ Այդպիսի կոնտրռևոլուցիոն վնասարարական կազմակերպություններ հայտնաբերվեցին նաև Անդրկովկասում։

«Մեր մոտ Հայաստանում,— ասել է ընկ. Դ. Հարությունյանը Հայաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Պարտիայի 11-րդ համագումարում տված իր հաշվետվության մեջ,— աջ-տրոցկիստական երկերեսանիները սողոսկել են կուսակցական և խորհրդային զանազան ղեկավար օրգանները և լրտեսական-վնասարարական աշխատանք էին կատարում Խորհրդային Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ։

Այդ աջ-տրոցկիստական դավաճանները կազմակերպում և միավորում էին խորհրդային իշխանության թշնամի դաշնակների, սպեցիֆիկների, էսեռների, հնչակների հակահեղափոխական կուսակցությունների բոլոր մնացորդներին, բուրժուական նացիոնալիստներին և կուլակային տարրերին խորհրդային իշխանության դեմ, հայ ժողովրդի դեմ պայքարելու համար»։[1]

Բոլշևիկների պարտիան և սովետական ժողովուրդը մեծ Ստալինի գլխավորությամբ վիթխարի հաջողությունների հասան սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում, շնորհիվ պարտիայի գլխավոր գծի հետևողական իրականացման, շնորհիվ այն վճռական ու անսասան պայքարի, որը մղվեց երկու ճակատում ընդդեմ տրոցկիզմի և աջ օպորտունիզմի՝ որպես գլխավոր վտանգի տվյալ էտապում, ընդդեմ դեպի այդ թշնամիները գոյություն ունեցող հաշտվողականության։ Մեր երկրի պատմական նվաճումները ձեռք բերվեցին աշխատավոր մասսաների մոբիլիզացիայով, նրանց աշխատանքային ստեղծագործական ակտիվության աննախընթաց բարձրացման միջոցով։

1933 թ. սկզբներին Սովետական Միության բանվոր դասակարգը, գյուղացիությունը և աշխատավոր ինտելիգենցիան Լենինի—Ստալինի մեծ պարտիայի ղեկավարությամբ հնգամյա պլանը կատարեցին ժամկետից առաջ չորս տարի և երեք ամսում։

Հնգամյա պլանի կատարման արդյունքները ընկեր Ստալինը ամփոփեց ՀամԿ(բ)Պ Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան պլենումում տված իր պատմական զեկուցման մեջ։ Հնգամյակի հանրագումարներից պարզվեց, որ նրա իրականացման շնորհիվ լուծվել է պլանի գլխավոր խնդիրը՝ ստեղծվել է ծանր ինդուստրիա և նրա հիման վրա ժամանակակից տեխնիկական հզոր բազա՝ արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության համար։

Ստալինյան առաջին հնգամյա պլանի կատարման հետևանքով Սովետական Միությունը ագրարային երկրից դարձավ առաջավոր ինդուստրիալ երկիր, հետամնաց մանր գյուղացիական երկրից դարձավ աշխարհի ամենախոշոր առաջավոր գյուղատնտեսության երկիր։

Տնտեսության սոցիալիստական սիստեմը հաղթանակ տանելով կապիտալիստական տարրերի դեմ, տիրապետող դարձավ թե՛ արդյունաբերության, թե՛ գյուղատնտեսության մեջ։ Այդ հաղթանակների հետևանքով ոչնչացվեց գործազրկությունը քաղաքում, իսկ կոլխոզային կարգերը ոչնչացրին աղքատությունն ու չքավորությունը գյուղում։ Այդպիսով, ժողովրդական տնտեսու-

[1] Գ. Հարությունյան, ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը ՀԿ(բ)Կ 11-րդ համագումարում, էջ 11—12։

թյան բոլոր բնագավառներում վերացվեց մարդու շահագործումը մարդու կողմից։ Այս բոլորը հնարավորություն տվին բանվորներին և գյուղացիներին իրենց համար ունևոր և կուլտուրական կյանք ապահովելու։

Հնգամյա պլանի կատարման շնորհիվ ամրացավ ՍՍՌՄ պաշտպանունակությունը, նա դարձավ հզոր պետություն։

Ստալինյան հնգամյակի արդյունքների մեջ փայլուն կերպով արտացոլվեցին բոլշևիկների մեծ պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության արդյունքները։ Հնգամյա պլանի կենսագործման շնորհիվ միանգամայն փոխվեց նախկին հետամնաց, ագրարային ծայրերկրների դեմքը, նրանք դարձան ինդուստրիալ, առաջավոր տեխնիկայով զինված գյուղատնտեսության երկրներ։ Սովետական Հայաստանը, որը մեկն էր այդ ծայրերկրներից, Սովետական մեծ Միության և Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների ընտանիքում առաջին հնգամյակի տարիներին հսկայական առաջընթաց կատարեց երկրի ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ու կուլտուրական շինարարության բնագավառներում։

ՍՍՌՄ-ի տեխնիկա-տնտեսական հետամնացության վերացումը պահանջում էր առաջին հնգամյակի տարիներին իրականացնել շինարարության վիթխարի ծրագիր։

Այդ հսկայական շինարարական ծրագրի կատարումը հնարավոր էր խոշոր նյութական և ֆինանսական ներդրումների միջոցով, որը կատարվեց բացառապես երկրի ներքին միջոցների հաշվին։

Առաջին հնգամյակի տարիներին Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների պլանը գերակատարվեց կազմելով 312,3 միլիոն ռուբլի, որից միայն արդյունաբերության մեջ ներդրվեց 116,3 միլիոն ռուբլի։[1] Արդյունաբերության անընդհատ զարգացումն ապահովեց նրա առաջատար դերը երկրի ժողովրդական տնտեսության մեջ։

Հնգամյակի պլանով նախատեսված արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ ավարտվեցին և շահագործման հանձնվեցին, իսկ մի շարք գործարաններ, ֆաբրիկաներ և էլեկտրոկայաններ, որոնց շինարարությունն սկսվեց առաջին հնգամյակի տարիներին, ավարտվեցին երկրորդ հնգամյակի ընթացքում։ Ստեղծվեցին արդյունաբերության միանգամայն նոր ճյուղեր՝ քիմիական, հանքային, ցեմենտի, տեքստիլ, կոնսերվի, մսի և այլն։ Լայն աշխատանք կատարվեց տեղական արդյունաբերության մի շարք նոր ճյուղեր ստեղծելու ուղղությամբ։

Հայկական ՍՍՌ ինդուստրիալ զարգացման համար լավագույն ցուցանիշ կարող է հանդիսանալ արդյունաբերության արտադրանքի ծավալի չափը՝ ժողովրդական տնտեսության մեջ։ Նրա ընդհանուր արտադրանքը 1926—1927 թվերի անփոփոխ գներով 1932 թ. վերջում գերազանցեց 1927—1928 թ. թ. մակարդակը մոտ չորս անգամ։ Խոշոր արդյունաբերության արտադրանքը հնգամյակի վերջում գերազանցեց 1928 թ. մակարդակը՝ մոտ չորս ու կես անգամ։[2] Խոշոր արդյունաբերության հիմնական արտադրական միջոցները

---

[1] „Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 г. г.), стр. 20—21.

[2] Նույն տեղում, էջ 23։

1928 թ. համեմատությամբ 1932 թ. վերջում աճեց ավելի քան երեք անգամ։[1]

Երկրի ինդուստրացման հաղթանակի շնորհիվ արմատապես փոխվեց արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի տեսակարար կշռի հարաբերությունը։ Եթե արդյունաբերության տեսակարար կշիռը արդյունաբերության և գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի ծավալի մեջ 1927—1928 թ. թ. կազմում էր 21,5 տոկոս, ապա հնգամյակի վերջում այն կազմեց 58 տոկոս։[2]

Ռեսպուբլիկայի հնգամյա պլանի մեջ չափազանց կարևոր տեղ էր գրավում երկրի էլեկտրիֆիկացիայի զարգացման ծրագիրը, որը ինդուստրիայի շինարարության և ամբողջ ժողովրդական տնտեսության զարգացման օրգանական մասը հանդիսացավ և խթանեց նրա զարգացումը։ Հնգամյակի վերջում Հայաստանում գործում էին 29 էլեկտրակայան։ Դրանց հզորությունը հավասար էր 21,3 հազար կիլովատի, որը գերազանցում էր 1927—28 թ. թ. եղած հզորությունը ավելի քան 4 անգամ։ Էլեկտրաէներգիայի արտադրանքը հնգամյակի ընթացքում 20,6 միլիոն կիլովատ ժամից հասավ 53,6 միլիոն ժամի։[3]

Հնգամյակի տարիներին արմատական փոփոխությունների ենթարկվեց գյուղատնտեսությունը։ Գյուղացիական լայն մասսաները զնացին կոլխոզները և դրա շնորհիվ 1932 թ. Հայաստանի ամբողջ ցանքային տարածությունների (առանց աշնանացանի) 39,2 տոկոսը գտնվում էր կոլխոզային սեկտորի ձեռքում։[4] Գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման, նրա ապրանքայնությունն ավելացնելու, տեխնիկական կուլտուրաների ցանքերի տարածության լայնացման և անասնաբուծության զարգացման խնդիրները հանդիսացան հնգամյակի կենտրոնական հարցերը։ Իրիգացիայի բնագավառում զգալի աշխատանքներ ծավալվեցին։ Գյուղատնտեսության մեջ (ներառյալ և իրիգացիան) կատարված ներդրումները կազմեցին 96,6 միլիոն ռուբլի։[5] Ոռոգելի տարածությունը հնգամյակի վերջում հասավ 119,2 հազար հեկտարի, որի շնորհիվ է՛լ ավելի ընդարձակվեց տեխնիկական կուլտուրաների և այգիների տարածությունը։ Հնգամյակի սկզբին Հայաստանում ոչ մի մեքենա-տրակտորային կայան չկար, մինչդեռ 1932 թ. գործում էր յոթը կայան, որոնք սպասարկում էին 270 կոլխոզ։[6] Ռեսպուբլիկայի բոլոր ցանքերի 40,6 տոկոսը պատկանում էր համայնական սեկտորին (սովխոզները և կոլխոզները միասին), որից, ըստ կուլտուրաների, հացահատիկային բաժինը կազմում էր ռեսպուբլիկայի ընդհանուր հացահատիկային ցանքերի 34,4 տոկոսը, տեխնիկական կուլտուրաների ցանքերի 64,8 տոկոսը, կերաբույսերի՝ 87,5 տոկոսը։[7]

Զգալի նվաճումներ ձեռք բերվեցին գյուղատնտեսության ավելի հետ

---

[1] Социалистическое строительство Арм. ССР (1920–1940 г.г.) стр. 31.

[2] «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր (1920—1934 թ. թ.) Խորհուրդների VIII համագումարի առթիվ, էջ 19։

[3] „Социалистическое строительство Арм. ССР (1920—1940 г. г.), стр. 24.

[4] Նույն տեղում, էջ 42։

[5] Նույն տեղում, էջ 43։

[6] Նույն տեղում, էջ 57։

[7] „15 лет Советской Армении в цифрах", стр. 136.

մնացող բնագավառում՝ անասնաբուծության ասպարեզում։ Այն դեպքում, երբ ռեսպուբլիկայում 1929—1930 թ. թ. դասակարգային թշնամու վնասարարության պատճառով զգալի չափով պակասել էր անասունների գլխաքանակը, հնգամյակի տարիներին, անասունների թե՛ գլխաքանակը և թե՛ նրանց մթերատվությունը հանրայնացված սեկտորում անշեղորեն բարձրացավ։ Այսպես, համայնացված անասունների գլխաքանակը ըստ տարիների աճեց հետևյալ կերպ.

	1928 թ. հունվար	1932 թ.[1] հունվար
	(հազարներով)	
Ձիեր	0,2	11,3
Խոշոր եղջերավոր անասուններ .	2,2	107,5
Մանր՝ եղջերավոր անասուններ . .	6,3	167,1
Խոզ	1,0	9,6

Առանձնապես հիշատակության արժանի է այն փաստը, որ շնորհիվ Համկ(բ)Պ Կենտկոմի և Միութենական կառավարության ձեռնարկած միջոցառումների և անձամբ ընկեր Ստալինի ցուցումների, կոլխոզային անասնաբուծության զարգացման և կոլխոզային ֆերմաների կազմակերպման ուղղությամբ զգալի բեկում առաջացավ ինչպես ամբողջ Միության մեջ, այնպես էլ Հայաստանում։ Հնգամյակի տարիներին կազմակերպվեցին 422 զանազան ֆերմաներ, որոնցում ընդգրկված ձիերի գլխաքանակը 1932 թվի վերջում հասնում էր 1,6 հազարի, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 29,4 հազարի, մանր եղջերավորներինը՝ 74,6 հազարի[2] և այլն։

Այսպիսով, ինչպես ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներում, այնպես էլ սոցիալիստական սեկտորի անասնաբուծության ասպարեզում առաջին հնգամյակի տարիներին ձեռք բերվեցին որոշ հաջողություններ, որոնք հիմք հանդիսացան անասնաբուծության հետագա զարգացման համար։

Ստալինյան առաջին հնգամյա պլանը՝ մեր երկրում սոցիալիստական տնտեսաձևի հաղթանակի պլանն էր, սոցիալիզմի հաղթարշավի հետագա ծավալման հիմքը։

Խոսելով մեր պատմական հաղթանակներն ապահովող ուժերի մասին, ընկեր Ստալինը ասում է.

«Այդ, նախ, բանվորների ու կոլտնտեսականների միլիոնավոր մասսաների ակտիվությունն ու անձնվիրությունն էր, խանդավառությունն ու ձեռնեռեցությունը, մասսաներ, որոնք ինժեներ-տեխնիկական ուժերի հետ միասին հսկայական էներգիա զարգացրին սոցիալիստական մրցության ու հարվածայնության ծավալման նկատմամբ։

Այդ, երկրորդ, պարտիայի ու կառավարության հաստատուն ղեկավարու-

[1] „Социалистическое строительство Армянской ССР (1920—1940 г.г.), стр. 80.
[2] Նույն տեղում։

թյունն էր, որոնք կոչ էին անում մասսաներին առաջ գնալու և որոնք հաղթահարում էին դեպի նպատակը տանող ճանապարհին ծառացած բոլոր ու ամեն տեսակի դժվարությունները։

Այդ, վերջապես, տնտեսության սոցիալիստական սիստեմի հատուկ արժանիքներն ու առավելություններն էին, մի սիստեմ, որի մեջ թաքնված են բոլոր ու ամեն տեսակի դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ վիթխարի հնարավորություններ»։[1]

О. Карапетян

Советская Армения в период борьбы за коллективизацию сельского хозяйства

(1930—1934 г. г.)

Резюме

Задача социалистической переделки раздробленного, индивидуального крестьянского хозяйства и создания колхозов стояла перед партией Ленина—Сталина с момента победы Великой Октябрьской революции. «К организации колхозов—указывал товарищ Сталин,—Ленин звал партию еще с первых дней Октябрьской революции. С тех пор пропаганда идеи колхозов не прекращалась у нас в партии. Однако, призыв к строительству колхозов нашел массовый отклик лишь в последнее время». (И. Сталин, Соч. т. 2, стр. 88—89).

В 1929—1930 г. г. началось массовое вступление основных масс крестьян в колхозы, подготовленное всей предшествовавшей работой партии и Советского правительства.

Кооперативный план Ленина явился научной основой социалистического преобразования мелко-крестьянского хозяйства.

Важнейшей предпосылкой строительства колхозов явилась индустриализация страны. Были созданы особые отрасли промышленности, производящие в массовом масштабе сложные сельскохозяйственные машины

Рост совхозов и колхозов, машинно-тракторных колонн, а также решительная борьба с кулачеством подготовили переход к сплошной коллективизации.

С лета 1929 года наступил решительный поворот в деле колхозного движения. Середняк пошел в колхозы. В конце 1929 года советская власть перешла от политики ограничения и вытеснения кулачества к его ликвидации, как класса, на основе сплошной коллективизации.

Великий перелом в области развития сельского хозяйства и поворот крестьян в сторону колхозов в Советской Армении был отмечен массовым вступлением в колхозы бедняков и середняков. Благодаря подъему колхозного движения значительная часть трудовых крестьянских хозяйств республики была коллективизирована. В январе 1930 г. была организова-

[1] Ի. Վ. Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 483—484։

на первая машинно-тракторная станция в Сардарабаде (ныне Октемберян).

Кулаки оказывали отчаянное сопротивление: убивали активных работников колхозного движения, поджигали колхозное имущество, агитировали за убой и разбазаривание скота крестьянами до их вступления в колхозы и т. п. Право-оппортунистические элементы оказывали содействие кулакам в их борьбе против мероприятий партии и правительства.

В отдельных районах были нарушены директивы ЦК ВКП(б) о темпах коллективизации, нарушен ленинско-сталинский принцип добровольности в колхозном строительстве и были допущены случаи раскулачивания середняков. Искривление большевистской линии в колхозном строительстве привело к отсеву из колхозов.

Опубликованные в «Правде» статьи товарища Сталина «Головокружение от успехов» и «Ответ товарищам колхозникам» помогли выправить положение. С сентября 1930 г. начинается рост колхозов. Так, к 1-му сентября в республике насчитывалось 380 колхозов, объединявших 9,5 процента крестьянских хозяйств, к 15-му декабря количество колхозов увеличилось до 458, а коллективизация возросла до 11,4 процента.

Большевики Армении, борясь за осуществление указания товарища Сталина, поставили себе задачей укрепить колхозы, организовать колхозное производство, разоблачить и изгнать из колхозов кулацкие элементы, исправить допущенные искривления в колхозном движении и обеспечить нормальный рост колхозов.

26-го июня 1930 г. открылся XVI съезд ВКП(б). Он вошел в историю как съезд развернутого наступления социализма по всему фронту. Съезд подвел итоги социалистического наступления как в городе, так и в деревне. Социализм побеждал не только в промышленности, но и в сельском хозяйстве. Колхозное крестьянство превратилось в прочную опору советской власти. СССР вступил в период социализма. Эти исторические успехи были достигнуты в борьбе с остатками гибнущих классов, их агентурой, с бухаринцами и троцкистами.

Рабочие и колхозники Армении под руководством партии большевиков проделали большую работу в деле осуществления исторических решений XVI съезда партии. Исторические указания товарища Сталина на съезде сделались достоянием широких масс. Социалистическое соревнование и ударничество охватило широкие массы рабочих и колхозников. На предприятиях республики в сентябре насчитывалось более 17 тысяч ударников. Сталинский призыв овладеть техникой был подхвачен трудящимися. По примеру рабочих и колхозников других братских республик, рабочие и колхозники Армении стали бороться за поднятие производительности труда, за выполнение пятилетки в четыре года.

В третьем году пятилетки в народное хозяйство Армении было вложено 82 мил. рублей. Промышленная продукция по сравнению с 1930 г. выросла на 47,4 процента. Удельный вес промышленности в народном хозяйстве составил в 1930 г. 33,3 процента, а в 1931 г. 42,4%. Значительно

увеличилось производство электроэнергии, по сравнению с предыдущим годом оно возросло на 24,4 проц.

Постройка и ввод в эксплоатацию ряда крупных фабрик, заводов и электростанций в годы первой пятилетки подняли долю промышленной продукции до половины общей продукции страны. Общая продукция промышленности по измененным ценам 1926/27 г. по сравнению с уровнем 1927/28 г. возросла в конце пятилетки почти в четыре раза. Продукция крупной промышленности по сравнению с 1928 г. увеличилась в 4,5 раза. Мощность электростанций превысила уровень 1928 г. в четыре раза, количество добытой энергии с 20,6 мил. к. ч. в 1927/28 г. увеличилось до 53,6 мил. к. ч. в 1932 г.

Коренные изменения произошли в сельском хозяйстве: в конце пятилетки число МТС доходило до 7, более 40 процентов посевных площадей было в социалистическом секторе, МТС обслуживали 270 колхозов. Значительных успехов добилась Армения в области восстановления поголовья животноводства, число животноводческих ферм достигло 422, с количеством лошадей 1,6 тысяч, крупного рогатого скота 29,4 т., мелко-рогатого—74,6 т. и свиней—11,4 т. голов.

Серьезные достижения имелись в области культуры, искусства, науки и народного образования. Большие успехи были достигнуты в области поднятия материального благосостояния трудящихся.

Все эти невиданные в истории армянского народа достижения являлись результатом осуществления грандиозных задач первой сталинской пятилетки. Достаточно указать, что Советское правительство и партия Ленина—Сталина за 4 года и 3 месяца вложили в народное хозяйство Армении 312,3 мил. рублей. Благодаря выполнению первой пятилетки, Советская Армения из отсталой аграрной страны превратилась в промышленно-аграрную страну с цветущей промышленностью, колхозным сельским хозяйством и передовой социалистической культурой.